

ՍՈՓԵՐՔ

ՀԱՅԿԱԿԱՆՔ

ԺԴ.

ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

# ՍՐԲՈՅՆ

# ՆԵՐՍԵՍԻ

# ՇՆՈՐՀԱԼՒՈՅ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

Ի ՎԵՆԵՏԻԿ

*ի Տպարանի Մխիթարեանց*

ՌՅԳ — 1854

## Ա Զ Դ

Հայկազունն 'ի հայրապետաց մեր-
յոց Սրբոյ և Թադէոսի Լուսա-
ւորչին, և հաջորդ հօրս նորին և
որդւոյն, ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԵՍ Դ., որ
պէսպէս մակդրութեամբ կոչի. Կլայ-
եցի՝ վասն բնակութեանն 'ի Հռո-
մկլայական Կլայն, Նորոգող՝ վասն բա-
զում երգոց և տաղից և շարակա-
նաց իւրոց, և աստուել և արժանա-
պէս՝ Շնորհալի կամ Ներսէս Շնոր-
հալի. ոչ միայն ընդ նշանաւորսն 'ի
որդւոց և 'ի վարդապետաց եկեղե-
ցւոյ զաւակաց, այլ և յամենայնն այն
է, անուղղութեամբ վարուց և
հեզութեամբ բարուց, քաղցրա-
ալոյ բանիւքն և գրովք, ստուած

իմոց տեսութեամբք և բազմա-
հմուտ գիտութեամբ, վայելչախօս
ճարտարանութեամբ և հայրախնամ
հովուութեամբ. և 'ի վեր քան
զամենայն գեղեցիկ զուգաւորութիւ-
թեամբ առաքինութեանց՝ վսեմիցն
և քաղցունց. յամենայնի վէհ և
վայելուչ յարդարելով զիւր գնացս
և գրածս. որպէս և վարքս որ
գրեալք ոչ յետ բազմաց երջանիկ
փոխման նորա՝ վկայեսցեն. որոյ և
ով՞ գրութեան յատակ և գեղեցկա-
կերպ՝ արժանի մարգարտափայլ և քաղց-
րաբան հայրապետին։ Իսկ զայս-
փոքր գրոյն ոչ հին և ոչ 'ի վաղուց
ժամանակաց մեզ, այլ մատակարա-
րի 'ի վայելս սիրողաց Սոփերաց.
միանգամայն և հայելի վարուց ա-
կրթելեացն յառաքինութիւն և
յիմաստս, որպէս ամենեցուն վայ-
ել է, և առաւել աշխատանակցաց
սորուն կամ մերձաւորաց 'ի նոյն։

*Երանի՛ ազգի՛ և մանաւանդ ժամանակի՛ որ զայսպիսի ունիցի հայրապետ՝ հոգւոց անփոփէկ և յորդոր առաջնորդ. և լոյս և փառք եկեղեցւոյ:*

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՈՒՑ

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԵՍԻ

## ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ

## ԻՄԱՍՏԱՍԻՐԻ

## ՍԿՍԵԱԼ Ի ՆԱԽՆԵԱՑ

ՄԱՏԻ ՆՈՐԻՆ

Ա· ԶԱՌԱՏՈՒԹԵԱՆՑՆ անուան գը-թութեանցն շնորհ որ միշտ առ 'ի յօգուտ մարդկան բաւ խրատան-ցիւր ժամանակի առատաձիր նա-խախնամութեամբ որոյ եկեղե-ցւոյ պարգեւէ, անմոռաց յիշատա-կօք 'ի գիտութիւն ածել հանդերձ գոհացողական բարեբանութեամբ մեզ պարտ և արժան է։ Քանզի որ-պէս ինձ թուի, որք թարգմանողա-կան պարգեւաց գերապատուողք և ընդունողք լեցին՝ առաւել սիրելի նոցունց լինիցին, քան որք անշնոր-հակալք և անպատուողք առ 'ի նոցանէ բարեացն երեւելեացն։ Մա-նաւանդ թէ պատիժս պատուհա-սից արժանացեալք 'ի նոցանէ կրի-ցեն. և զի այս այսպէս է հաստա-տեալ, ապա իրաւի հարկ է մեզ ընդարձակապէս 'ի մատակարարացն

փախչել, և օգտակարագոյն բուռն հարկանել. ուստի հոգևոր շահիցն առ 'ի անտանէ հատանիցեմք։ Ոչ զանց առնելով զայսպիսոյ աստուածազգեաց հայրապետէ և ընտիեզերալոյս խնամատարէ, որ պարգևեաց Աստուած լուսատու եկեղեցւոյ իւրոյ յերեկոյացեալ ժամանակիս, և ծուլութեամբ 'ի մոռացօնս և աղաւաղանս մատնել։ Վասն որոյ այսուհետև 'ի բաց գիցուք զթանձրամած խաւար մտաց և հոգւոց, մաքուր և յստակ տեսութեամբ՝ 'ի զգալի պատմագրանց մաքրեալ, իմանալի թևօք 'ի հանգէս առաքինութեան սուրբ հօրս մերոյ և երկրորդ լուսաւորչին որոյն՝ Ներսէսի ժամանեցուք. թերևս 'ի նմանէ արժանացեալ առնուցուք զշնորհս բանի և իմաստութիւն՝ ողջախի և անսայթաք շարագրել զառաքինեաց պատմութիւն սուրբ և համանհրեշտակ վարուց նորին արժանաւորս։ Որ և վստահացեալ 'ի նորին աստուածայնագոյն հեզութիւն՝ հաւատամ առնուլ 'ի նմանէ

բառ տաղերական շնորհին զհոգի
իմաստութեանն . որով յառաջի-
կայ նաւարկութիւնս անհնարին 'ի նա-
ւահանգիստ պատմութեանս հա-
սանիցեմ զճշմարտութեանն արտա-
բերելով զբան : Քանզի ես այր
տառապեալ , ունայն և զատարկ
յիմաստութեան վարժից , միան-
գամայն և բնաւին բարեաց հեռա-
ցեալ շնորհին հետևմանց , և անար-
ժան մաքրութեան սուրբ Հոգին ,
զինչ համարձակեցայց 'ի վեր քան
զիս մատչել գործառնութեանն :
Այլ 'ի ձեր սուրբ և մաքուր ա-
ղօթս ապաւինեալ պատսպարեցից փոքր
'ի շատէ Հոգւոյն սրբոյ պաշտպա-
նութեանց և նորին խնամոցն ձե-
ռնտուութեանց , զորս 'ի նախկին
պատմողաց ժողովելով , և զորս յի-
մոց գիտութեանց 'ի տեղեկութենէ
ճշմարտապատում արանց ստուգա-
պէս լուեալ , շարահիւսեցից բան ի-
մոյ տկարութեանս կարի : Նու զուք
տիրաժառանգ մատաղիւրութեանց
լուսաւորք , աղօթս 'ի վերայ մեր ա-
ննելով , մանկախնամաբար սիրով և յօժա-

Գրիգորի, որդի Վասակայ պահլա-ւունւոյ և մարտիրոսի անուանն Բջ-նոյ Գրիգորիոսի անուանն. յոյժ իմաս-տուն և հանճարեղ, և ներքին և արտաքին ուսմանց ներհմտութեամբ վարժմունք 'ի մանկական տիոց հայ-կական և յունական գրութեանց. Մինչև հասեալ 'ի հաւետարական աստիճան փիլիսոփայութեան. որ և ուղևորեալ 'ի Թագաւորեալ քա-ղաքն Կոստանդինուպոլիս յանդի-ման լինէր Թագաւորին, և պա-տուեալ յինքնակալէն և 'ի մեծա-մեծաց պալատանն՝ ըստ արժանեաց բարեպաշտութեանն և ըստ մեծ-իմաստ գիտութեանն և հանճարոյն. բանիւք ընդ իմաստասիրան Յունաց ուսու բազում 'ի հայոց և 'ի փորձ 'ի դժուարայոյն բանից մեկնեալ ըստ փիլիսոփայական արուեստի, և ըստ եկեղեցական օրինաց և կարգի յաղթէր ընտանեացն, և տկարացոյցն զանձնեանն երեւեցուցանէր ան-ճառելի գիտութիւնն. Հզօր գո-լով նոքա 'ի պատասխանիս, և հան-ճարեղ և խոհական 'ի դարձուածս

բանից ։ Արդ աղագաւ ընկալեալ
լինել յինքնակալէն զպատիւ մա-
գիստրոսութեան և դքսութեան, և
տարեալ յաշխարհն արևելից ար-
քեալ յայնոց գաւառաց ։ Արդ և
կեալ ոչ միայն մարմնական իշխա-
նութեամբ հռչակէր զաշխարհս ամ-
նայն որ ընդ իշխանութեամբ նորա
էին, այլ և հոգևորական կարգա-
ւորէր զամենեսեան բան հանճարին
Նշանաւոր ։ Զարդարէր զվանորայս
և զեկեղեցիսն աստուածային պայ-
ծառաւորն կարգօք ։ յարդէր զորս
իմաստունս և զառաքինիս և զգա
եկեղեցականաց և յանձնանձէր զա-
մենեսեան աստուածայնագէս ։ Ժո-
ղովէր զհոգիս վարդապետաց և զըն-
նէր նորայ անդադար զփառս աս-
տուածայնոյն խնամոց, և զար-
ցուցանէր զամենեսեան ՚ի գործս
առաքինութեան և աստուածպաշ-
տութեան ։ Հայր բառ Ցորոյ եղեալ
որբոց և այրեաց, և տուեալ գանձս
նուիրականս սրբարանէր յանձինս
տնանկաց և կարօտելոց ։
Իսկ քանզի ՚ի ժամանակին յայն-

մեկ զօրացեալ լինէր աղանդն Մա-
նիքեցւոց և Թոնդրակեցւոց, զորս
խելք արմատացի տառածանելոյ
վարդապետութեամբ, և մերժել ի-
մաստայեցց և կարգաւորած թղթովք.
իսկ առ անհաւատն և խոստայեայն
չարութեամբ որք բառ բնութեան
խմից և զօրրից՝ ոչ կամէին լսել
զձայն Թովլչին Ճարտարի, և ոչ ա-
նալ գեղ ՚ի գեղատունէն խմառնդոյ,
զիշխանականն առաս ՚ի կիր արկա-
նէր, և այնպէս տապալէր ՚ի հիմա-
նէ զհնացեալն չարութիւն։ Այլ-
բարւոք կենդաղակարութեամբ և
համօրյական քաղաքավարութեամբ
կացեալ փոխի յաստեայս սերմա-
նութեամբ յանվաղճան կեանսն,
Թողլով մառանդ բարի զանմնայինու-
նմանեայն բարեխառնութեանց նախ-
նայն իւրեանց պարթեւացեան պահ-
լաւուն Գրիգորի՝ Վահրամ անուն։
Սնեալ և վարժեալ ՚ի մանկական
տիոց ուսմամբ աստուածայինն գրոց
և զարդարեալ ամենայն բարու-
թեամբ. որոյ հասեալ ՚ի հայրենին
իշխանութեան աստիճան՝ գեղեցիկ

և պարկեշտ քաղաքավարութեամբ զարդարէր զանձն ։ Նորա զմտաւ ածէր զախորժականն հրաման որ ասէ , թէ Որ ոչ առնու զխաչ իւր և առաջի զանձն և եկեսցէ զկնի , ոչ կարէ իմ աշակերտ լինել ։ Եւ վաղվաղակի 'ի բաց մերկանայր զաշխարհական ձեւ , և լուծանէր զիշխանական կամաց , և հրաժարեալ յիրայոյն՝ հետեւէր 'ի միայնաստանս զգեցեալ զխոնարհութեան ձեւ . և հնազանդեալ առաջնորդական կենաց . Ճգնէր պահօք 'ի տուէ և 'ի գիշերի համբոյր մեծին Յովհաննու , և աստուածաշունչ տառից միշտ ընթերցմամբ կերակրէր զբանաւական հոգին ։

Դ ․ Այլ քանզի ոչ կարէ քաղաք թաքչել որ 'ի վերայ լերին շինեալ իցէ · ընդ այն ժամանակս բարձեալ լինէին հովուապետքն Հայոց յաշխարհէ , և պակասեալ տունն աստուած Պետրոսի յաջորդանուոր ժառանգաւորէ որպէս ծերացեալն Հեղի , և Մնայր առանց Թորգոմեան զեւթ- ամ առանց հայրապետի ։ Քանզի

այխարհս ընդ այն ժամանակս ան-
կեալ էր 'ի ձեռս այլազգեաց , և ա-
թոռ կաթողիկոսութեանն փոխա-
րեալ 'ի Սեբաստիա , և այն ընդ իշ-
խանութեամբ Հոռոմոց . և վասն
այնորիկ Թագաւորք Յունաց ոչ
տային թոյլ դնել զոք կաթողիկոս ,
ակս անառաջնորդք մնալոյ ազգիս
մերոյ և այնր աղագաւ յինքեանս
դառնալոյ ։ Յայնժամ արքայն Հայոց
Գագիկ մեծու ջանիւ և բազում
աշխատութեամբ գուն գործել ա-
ռաքել տա Թագաւորն Յունաց մե-
ծու ծախիւք . և զամենայն զԿարս
այսմ խնդրելոյ փոխանակեալ առայր
'ի ձեռս Հոռոմոց , և առնուր հրա-
ման 'ի Թագաւորէն ամեն մասա-
նեաւ կնքեալ՝ նստուցանել զո և
կամեցին յաթոռ հայրապետու-
թեանն Հայոց ։ Այսպէս Թագաւորն
Հայոց Գագիկ ժողովէր զհարս
Հայոց առ հասարակ , և միաբան
համախոհութեամբ գտեալ զարժա-
նաւոր խնդրոյն , որպէս 'ի վերուստ
ակնարկութեամբ Հոգւոյն սրբոյ
յայտնեալ զպանծալի ծածկեալ յա-

գարակի, և ամենեցուն համաձայնութեամբ յառաջ կոչէին զՎահրամ որդի Գրիգորի մագիստրոսի զորմէ վերագոյն ասացաք. որոյ ծանուցեալ հրաժարէր 'ի պատուոյն, անարժան վարկանելով զինքն մեծի կոչմանն, և Աստուծոյ և մարդկան միջնորդ լինելոյն: Որոց ամենեցուն բռնադատեալ կոչէին զնա յանուն նախնոյն իւրոյ սրբոյն Գրիգորի Գրիգորիս. և արժանաւոր ձեռնադրութեամբ և հոգևոր օծմամբ նստուցանէն յաթոռ կաթողիկոսութեան Հայկայ և Թորգոմայ: Որ վիմին հաւատոյ և անօթոյն ընտրութեան համեմատ հաստատեաց զհիմունս եկեղեցւոյ Հայաստանեայց, և վերստին լուսազարդեալ պայծառացոյց համանման սուրբ Լուսաւորչին և սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրովբայ. քանզի ունէր շնորհս թարգմանութեան և միշտ քննէր զգիրս ամէնայն ազգաց և զպիտանիսն՝ զոր ըստ մերս թերի գտանէր՝ թարգմանէր աշխատասիրաբար ինքեամբ և այ-

լոյս տօնին Յարութեան , և առան_
ցեր եկեղեցւոյ սրբոյ . կարգէր
ամեն վկայից և արանց սրբոց ի սպա_
սուէր գնտոսն՝ պայծառ աւագ օրն ամսա_
խմբութեամբ , և նորագոյն Թարգ_
մանեալ Յամաիւ ։ Նա ինքն վա_
ւեալ ՚ի հօր սիրոյ նոցին խառնէր
զիւրն մշտամթոր արտասուս ընդ_
սուրբ և պատուական արիւնս նո_
ցա . որ և բառ ընկալեալ իւրոյն
զոր ունէր առ սուրբ վկայսն՝ ըղ_
ձկայաւէր անուն ընկալաւ . զոր
մեզ վերադրել եկեղեցի յամենե_
ցուն լսելիս գովաբանաց յորջոր_
ջեան ։ Հովուէր զհօտն յանձին ա_
րաւելալ նման ՚ի անուանել բառ օրինի
քոյ հովուապետին , և տանէր զա_
մենեսեան ՚ի վայրս գալարս և ՚ի
ջուրս հանգստեան , յաստուածայ_
ին պատուիրանացն պահպանու_
թեան . ածէր հանդարտ վասն փրկ_
կութեան հոգւոց նոցա , և ոչ ինչ
էր նման փոյթ , քան թէ անմիջապա
մնալն նոցա յապականելի գայլոց .
ցէջէր մեջս առ նոսա . և խրատէր
զամենեսեան գթով յորդոր և ՚ի

պատուիրանս աւետեան անդարատու-
թեանն ։ Աշխատէր յընթացսն եր-
րեմն յոլովանակաւ երբեմն 'ի հե-
տիոտս, և քաջցրագոյն էր նմա աշ-
խատութիւն մարմնոյն առ սէր աս-
տուածայնոյն ։ Արհամարհեալ էին
'ի նմանէ իրք մարմնականք, և ոչ էր
փոյթ ինչ նմա յաղագս փառաց
անցաւորի, այսինքն հեծանելեաց,
փափկերախ երիվարաց կամ զար-
դարեալ կիսիչէից, կամ զգեստոյ
խենեշութեան՝ որով բազումք ար-
տաքուստ զարդարին, որպէս յարա-
նի է անձնեցուն. նա և ոչ գոյր
նմա տուն հանգստեան, կամ տեղ-
բնակութեան, որով հանգիստ առցէ
ախորժութեան մարմնոյ 'ի բազում
աշխատութեանցն. կամ ժաման-
դութիւն ինչ մարմնական առա-
ջեալ. կամ 'ի միում վայրի բնակու-
թիւն կալեալ, այլ անհանգստաբար
շրջէր յերկրի, և զբաղեալ հոգին
կերակրէր աստուածային բանիւն։
Գնայր 'ի սուրբ քաղաքն Երու-
սաղէմ, և երկրպագանէր սրբ
տեղեացն որ անդ. և հասանէր յա-

բնամուտ, ուր ազգ բազում հայոց իշխող էին և լուսաւորեալ զհոգիս նոցա, և հաստատեալ 'ի հաւատս. զայլ հատանէր 'ի Թադէոսեալ քաղաքն Կոստանդինուպօլիս և յան-գիման լինէր Թադէոսին և պատ-ճառին. որոց անեալ զմնացին սատուածագեաց հայրապետ զար-գարեալ շնորհօք և իմաստութեամբ Հոգւոյն սրբոյ, Մեծաւ պատուով ընկալան զնա. մանաւանդ յորժամ խաւսեցան ընդ միմեանս 'ի հարց և 'ի փորձ բանի, բառ որինի իմաստնոյ և գտին զնա անթերի լմանայ լցեալ 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ. քանզի յաջողեալ էր յունականն լեզուին և զպրութեանն, և յեր և 'ի բանս բառ ամենայնի փորձ և կիրթ. 'ի հարցուածան խոհեմ, և 'ի պատաս-խանիւն զգօն և հանդարտ. գեղ երեսացն բարեհամեմ և հեզահայ-եաց, և բանք աստուածանեկի լե-զուին համեստ և քաղցրագոյն. յորս կապեցան սիրով Թադէոսին և բովանդակ իմաստնոյն ժողով: Յայնժամ տուրքն Աստուծոյ բառ

խորագէտ իմաստութեանն իւրոյ խնդրէր 'ի թագաւորէն և 'ի պաշտ- րնապգէն գադարել ժամանակս ինչ առ նոսա և ընթեռնուլ զմատեանս նոցա և օգտել. յաժարեալ կարգե- ցին անմեղացն որոց ընդ նմա՛ կե- րակուրս և ըմպելիս յարքունուստ, և հրամայեցին անխափան տալ զմա- տեանսն ամենայն նմա . որոյ գա- գարեալ անդ բազում ժամանակս և առեալ թարգմանեաց զկարգս ազգ Հայոց և զպատմութիւնս մեծայից . և զմատեանս ուղղափառ վարդապետ- աց , և զնշան նախարարեանց որ 'ի ասնս աշխարհին և յիշատակս որոց. և տայր ցայտնապէ որ ընդ նմայն էր' այր Տորոսաքի և իմաստունք , յա- բազայինս գրչութիւն և 'ի գիտու- թիւն բանի . զոր առեալ վաղվա- ղակի փոխադրեցին , որպարանեալ բան մեծութեան բայը զօրէս ամենեք և քերթողս բան քերթողացն ու- Հեստի ։

Իսկ յորժամ զինի բազում ժա- մանակի բաւականացեալ լցաւ ու- նու որում փափագէինն , կամակամե

սուրբ հայրապետն 'ի յանձնականն խոհմամբ և բարձրագոյնակ հնազանդեալ չարութենէ. զի թէ խնայեսցին, ոչ առացեն հանել 'ի նոցանէ զթարգմանելոյ մատեանսն: Սակս այդ իմն խորհրդոց զմտաւ ածելով, պատրաստէր զորս ընդ նմայն էին աշակերտքն իւր, և ընտրելոց առանց ժողով, և զորդի բերան իւր զարգարեալն երկրպագութեամբ գեղեցկութեամբ. գեղեցկութեամբ բառն մաքրոյ քաջագեղութեամբ, և բառ հայկայ պարզեշտութեամբ և ուղղութեամբ՝ զարդելապատուած զանէր Գրիգորիոս հանդերձ ամենայն կահիւն իւրեանց մտանել 'ի նաւ. և յառաջագոյն անցանել 'ի սահմանս Պաղեստինացւոց. և ինքն զկնի տակաւ աւուրց առնելով հրաման յայլմանէ, և աղջանիւ բաժանելով յամենեցունց. զի թեթևակի բաղձանելով հասցէ նոցունց: Որոց մտեալ 'ի նաւ հրաչելով ուժգին հողմոյ՝ վարէր բռնութեամբ զնաւն, և ձգէր յԵգիպտոս: Նա քանզի աշխարհն Եգիպտացւոց ընդ իշխանութեամբ

Արարածոց էր, երկեան երկնից մեծ, և անձն ունէին վարել յաւար և 'ի գերութիւն ։ Յայնժամ խորհուրդ իմաստութեան զննաւ անէր անէրն Գրիգորիոս․ և զգենոյր զեկեղեցական զգեստն իւր և զգեցուցանէր զարսն եկեղեցականս իւրեանց զգեստուք․ զարդարեցան և աշխարհայինք ինքեանց ամենեքեան պատմուճանօք զօրս ընկալեալ էին պարգեւ 'ի թագաւորէն Յունաց, ։ ամենեքեան պաճուճանօք նման, մեծամեծքն ըստ իւրաքանչիւր աստիճանի, և փոքրունքն կանգնեցան 'ի սպասու տաճարին ։

Իսկ որպէս աւարտութիւն էր առաջեաց կարգեալ իշխանն տեղւոյն տեսանել և իմանալ թէ զինչ իցէ որ կայ 'ի նոսին կամ ուստի իցէ եկեալ․ գնացին առաջի նորա և տեսին որս պատուական և գեղեցկատեսիլս զարդարեալս սպասաւք ընդեաւուք, և հիացան ընդ պանչելատեսիլն տեսիլ այն 'ի բերան եղեալ զարմանն առ իշխանն, և պատմեցին նմա ։ Յայնժամ իշխանն

յարուցեալ գայր առ Նոսա յոլովն պատուով և Հնազանդութեամբ և Հարցանէր Հեզութեամբ , թէ Ո՞ ո՛ք իցեն . և առեալ պատասխանի , եթէ Ազգականք և սպասաւորք կաթողիկոսին Հայոց եմք , և առաքեալ զմեզ յառաջագոյն , զի և ինքն եկեսցէ , որպէս զի անիցուք զսուրբ լեառնն Սինա , և զմիայնաւանս Նախնի սրբոցն որ աստ , և երկրպագեալ դարձցուք յաշխարհն մեր ։ Այս ընկալեալ իշխանն զնոսա պատուով և Հանգուցանէր մարդասիրաբար , և առաքէր վաղվաղակի ազդ առնէր ամիրապետին իւրեանց մեծ խալիֆային , որ էր յառաջնորդական աթոռ. ազգին իւրեանց . որ էր այր բարի և խնատուն , առատաձեռն 'ի պարգևս , քաղցր և ողորմած առ ամենեսեան . որ իբրև ծանեաւ՝ յոյժ ուրախ եղև , և փութանակի առաքեաց ածել զնոսա առ ինքն մեծաւ պատուով , զոր անեալ Համբուրէր ըղձական սիրով , և տեղեկացեալ Հարցմամբ 'ի Նոցանէ զպատճառս գա-

լսականն՝ ուրախ լինէր մանաւանդ
յորժամ ծանեաւ թէ սուրբ հայ-
րապետն գալոց էր անդրէն , և
հրամայեաց հանգուցանել զնոսա 'ի
պատշաճաւոր առ դուռն , և առ ըն-
դէմ նորա առաքեաց : Իսկ արք-
եպիսկոպոսն առնէր Գրիգորիս վարդա-
պետի առաքէր առ սուրբ հայրապետ-
ոյն և ծանուցանէր նմա զերևեանցն
պատահումն և հայցէր փութա-
պէս հասանել առ նոսա . և լուեալ
սրբոյն Աստուծոյ զայսոսիկ , վաղ-
վաղակի մտեալ 'ի նաւ՝ անդր հասա-
նէր . և բարեբարոյ խաղաղիկայն ամ-
նոյն մեծամեծօքն իւրովք ելանէր
ընդ առաջ նորա , և առեալ զաջ
ձեռանն համբուրէր և դնէր 'ի վերայ
աչաց և երեսաց իւրոց , և այլ մե-
ծաւ գոհութեամբ օրհնութիւն Աս-
տուծոյ , որ այնպիսի մեծի փառ-
թամութեան արժանի արար զինքն .
և հրամայէր պատրաստել նմա ի
ջեռանս պատուականս և հանգու-
ցանէր զնոսա որպէս արժանն էր .
և կարգէր նոցա սպասաւորս , պա-
տրաստական անձել զամենայն

պէտս նոցա մեծամեծս և տատա-
նուր պարգևօք, և լցոյց զնոսա 'ի
մեծամեծաց մինչև 'ի փոքունս օժ-
տապարգև ընծայիւք. ուխտով ա-
բարացուով և այլովք պատուականօք
զոր աշխարհն այն մատուցանէ ախե-
ղերայ ։ Նոքա յետ բազում աւուրց
ուտանելոյ զմեծամեծս, և յոգնակի
պատակցութեան խնդրէր սուրբ
հայրապետին հրամանի դառնալոյ
յաշխարհն իւր ։ Իսկ նա ոչ առնոյր
յանձն իւր ամենևին . Թէպէտ
սուրբ հայրապետին պատմէր և
գնէր առաջի զերկիւղն Աստուծոյ
յաղագս բազում ժամանակաց ան-
տերունչ թողլոյ զժողովուրդն իւր ։
Նաև . Յայտնի մեծագոյն պար-
գևել առաջնոյն իմն յԱստուծոյ, ոչ
երբէք զկնի այլ քաղաքացայց . գնէր
և այլ պատճառս բանի յաղագս ոչ
լինելոյ անդ յազգէս Հայոց ունայն
զհովուելն իւր ։ Իսկ նա բառնայր
զպատճառանս և երգմամբ հաստա-
տէր լինել զաշխարհն Հայաստա-
նեաց ազգաց, զոր և արար իսկ, և
բարձրացոյց անդ բազմութիւն յոյժ

իւր տանց տառն հաղորդոյ . և 'ի նո_
ցանէ բազում իշխանս և հեծելա_
զօրս պատուելով : Եւ տեսեալ սր_
բոյ հայրապետին զջերմեռանդն և
զգործունէին սէր նորա , թողոյր փո_
խանակ իւր անդր զորդի քեռն իւր
և ձեռնադրէր զնա կաթողիկոս Ե_
գիպտոսի , և այսու հաւանեցուցա_
նէր զԲաբելացւոց խալիֆայն թո_
ղուլ զնա ելանել յաշխարհէն իւ_
րոյ : Այլ մեզ ոչ է ժամանակ
պատմել զբարեկարգութիւնս 'ի նմանէ
եղելոյս առ նորակերտ հայրապետն
և առ ժողովուրդն իւր . քանզի
նախնիք յայլոց ձեռնեցուց մանրապա_
տում և երկարագոյն ճառագրու_
թեամբ , զոր իմ ընթերցեալ փոյթ
'ի չասէ 'ի պատմութիւնս նշանա_
կեցի :

Իսկ հայրապետն Գրիգորիս որ
յԵգիպտոս , էր այր սուրբ և իմաս_
տուն , զարդարեալ գիտութեամբ և
շնորհօք աստուածայնովք համա_
նման առաքինութեան սուրբ և Վ ը_
կայասէր հօրն : Զոր հաստատեալ
անդ սրբոյ հայրապետին յանձն առ_

ներ Քրիստոսի զՀովիւն Հանդերձ
Հօտին. և ինքն գայր Համանէր յայս-
կոյս բերելով եկեղեցւոյ Հայաս-
տանեայց զգանձն մեծ ծածկեալ
յագարակի, զոր իւրով աշխատու-
թեամբն գտեալ ստանդէր եկեղե-
ցւոյ սորայ և Հաստատեալ զամենե-
սեան 'ի սէրն որ առ. Աստուած՝
յորդորէր բանիւ և գրով արթուն
և պատրաստ լինել Հոգևորացն, և
ինքն զՆախնեացն փորձ զմտաւ ածեալ
և զԼուսաւորչին յեշէր զՀանգէս որ
'ի կատարումն աստուածային գոր-
ծոյն 'ի միաբանութեան Ազգներ: Սոյն
օրինակ և առ 'ի Սեաւ լերինն միայ-
նարանս բնակէր միշտ պարապեալ
ընթերցման սուրբ գրոց, և աս-
տուածախօս աղօթից: Նա գագա-
թեալ 'ի նոյն Ազնուութեան առն բա-
րեմն՝ գայր յեռ ժամանակի 'ի սահ-
մանս Քերսոն քաղաքի առ աս-
տուածասէր իշխանն Վասիլ մակա-
կոչեցեալն Գող. և յազգականացն
իւրոց զամենայն սուրբ և աստուածա-
Հաճոյ Բասիլիոս անուն՝ կարգէր
փոխանակ իւր Հովիւ և վերատե-

տուչ Տրդատայ հօրն և առնէր ըզ-
կայանս բնակութեան նորա 'ի սուրբ
անապատն, պարփակեալ լերամբք
Շուզր, և այդր ցնա յաւանդ զեր-
կուս պատանեակն զԳրիգորիս և
զՆերսէս զորդիս մեծաց իշխանին
Սպիրասին որդւոյ քեռն իւրոյ որ
էր եղբայր առէր Գրիգորի որ յԵ-
գիպտոս. և պատուիրէր մնուցանել
զնոսա զգուշութեամբ, և ուսուցա-
նել և խրատել երկեւղիւն Աստու-
ծոյ, լինել ժառանգ սրբոյ աթո-
ռոյն. զի մի անպայազատ մնասցի
'ի զարմէ նախնոյն իւրոյ սրբոյն Գրի-
գորի: Եւ ինքն փոխի յաշխարհէս
'ի բարւոք ծերութեան ալեւորեալ
մեծարեալ և պատուեալ 'ի մեծէ իշ-
խանէն Վաղէ 'ի կեանս և 'ի մա-
հուն, և հանգուցեալ 'ի վանս կար-
միր. ոչ 'ի գամբարանս նախնեաց,
այլ 'ի շիրիմս տապաց, իբրեւ զնժ-
գեհ ումն բառ երգոյն Դաւթի, կա-
ցեալ 'ի հովուապետութեանն ամս
քառասուն:

Դ. Իսկ սուրբ Հայրապետն Բա-

սփիւռ քաղաքավարեալ անարատ և անբիծ հռոմէականութեամբ և հալածեալ մեծաչափ աշխատութեամբ զդատս չար մշակացն որք փառամոլ ախտիւ համբարձին զգլուխս իւրեանց 'ի վերայ սորա եկեղեցւոյ Աստուծոյ՝ 'ի զօրանալ հարուածին ազգացն . և զարեամբ ազատեալն 'ի Քրիստոսէ ընդ կապակալուտ հարկաւորութեամբ այլասեռից արարեալ , և զերախայրիս ընծայիցն տեառն և զնուէրս հոգւոյ մարդկան Աստուծոյ ընծայեալս՝ վարձանս պոռնկաց տուեալ և 'ի գործս չարեաց վաճառեալ . զորս 'նհանջեալ իմաստութեամբն իւրով հերքելոց իբրև զկատաղի գազանս և զգայլս ապականիչս 'ի Քրիստոսի հօտէ :

Իսկ զմանկունս Նախախնամին ըղտուեալսն նմա յաւանդ 'ի սուրբ հօրէն , մնուցանէր և վարժէր իմաստութեամբ , և կրթէր յերկեւղ տեառն : Որոյ արդեանս հասեալ երիցագունին Գրիգորիսի , վերակացէր զնա յաստիճան քահանայութեան : Եւ աստ մինչեւ ուրախ

Էին 'ի Հայքին սուրբ ընծայելով առ աստուածային վարուց. փոխի յաշխարհէս սուրբ Հայրապետն Բասիլիոս. և յառաջագոյն քան զելանելն 'ի կենդանագոյս՝ զնայր յեկեղեցին, և կատարելք զկարգ եպիսկոպոսութեան և հովուապետութեան 'ի վերայ Գրիգորիսի. և զաւանդ սուրբ Հայրապետին Գրիգորիսի Վրկայարանին անձեր յաւարտումն, և ապա եղանէր յառաջացս Թողով մեզ զՅեսու ընդ Մովսէսի և զԵղիազար ընդ Ահարոնի.

Եւ այդ ամէրն Գրիգորիս հոգեւոր իշխանութեամբ կրթէր կաթուղիկոս հանուրց Հայոց նստեալ, և զարդարեալ 'ի Հայաստան աշխարհ բարեզարդութեամբ ըստ կանոնացն Աստուծոյ զամենայն ինչ յարգարէր. և ըստ ընտրողական մեծի մեծախնամ իւրոյ հանճարոյն անօրինէր բարեաց ընտրեալք աստուածայնոյն յոյժ հանուրս լինէր. կրթէր և զեղբայրն Ներսէս 'ի վարժումն խնամոց յաստուածայնոց աւուրց և կարգէր նմա զատախանակս այլս զխնամակալն

ուրբս և առաքինիս . որոյ ընկա-
լեալ 'ի նոցանէ զսերմն բանին , հա-
րիւրաւոր որպէս երկիր արգասաւոր
պտղաբերէր . և փոքր ինչ ժամա-
նակ կրթութեան՝ ցուցանէր զվարս
սուրբս և զիմաստութիւն գիտու-
թեանն՝ յորոց առաքինեաց և
գիտնոց վեհագոյն : Զոր տեսեալ
եղբօրն այնպիսի բարեզարդու-
թեամբ արգասաւորեալ , վերակա-
ցէ զնա 'ի կարգ առաջնորդութեան
և յաստիճան քահանայութեան :
Որոյ անձնամաքրութեամբ և աստուածայ-
նապէս ապաստաւորեալ միջնորդաւորիչ
և կենդարար սուրբ խորհրդոյն , որի-
նակ բարեացն տայր զանձն բազմաց .
և նախանձելի լինէր ազգախառն մայ-
դոյն 'ի բարիս : Քանզի վառեալ
էր ամենեւին 'ի հուր սիրոյն Աս-
տուծոյ , և ոչ ինչ էր 'ի մարմնական
գիջութեանց և 'ի մոլեկան զբաղա-
նաց որ կարէր շիջուցանել զայն-
պիսի բորբոքումն :

Ցետ որոյ բազում եպիսկոպոսաց
և սուրբ արանց ժողովով մեծապայ-
ծառ հանդիսիւ եպիսկոպոսու-

թեան արժանաւոր ձեռնարկութեամբ և ընդունողութեամբ ։ Իսկ առաքին Ներսէս թէպէտ և ընկալեալ լինէր զպատիւն , այլ ոչ ինչ փոյթ էր նմա յաղագս մարմնական ինչ իրաց ․ այսինքն ագահելեաց , կամ հեծանելեաց կամ սէր անցաւոր մամոնայի ․ որովք բազումք առմեալք խաբեալք կուրանան յիմանալի աչաց տեսութենէ ։ Այլ որպէս զանձամբքն 'ի մարմնի գոլով , առ վերին տեսութիւն աստուածայնոյն միշտ ունէր զիմանալի մտացն զգաստութիւն ։ Ոչ ունելով մարմնական ինչ հանգիստ , այլ անդադար ժուժկալութեամբ կրթութեան յաղթեալ , յընթերցուածս աստուածաշունչ տառից , և միշտ և յաղօթս 'ի նոյն քննութիւն ․ ուստի և ընկալաւ զշնորհս գիտութեան 'ի Հոգւոյն սրբոյ , ոչ ինչ ընդհատ յառաքելական դասուցն որ զհոգւոյն սրբոյն զբաժանեալն 'ի սուրբ վերնատանն ։

Մեկնէր զխորագոյն միտս բանից աստուծոյ գրոց , որով հրաշանային ընդ

քաջակորով իմաստութիւնն , և ընդ սքանչելի ուսմբ և յատուկ առաւե- թիւնն զոր ընթերցող վարդապե- տացն որ զայնու ժամանակաւ էին ։ Գրեաց և շարադրութիւն 2 գրոց , հրաշակերտակ և վայելուչ 'ի զանա- զան կերպս , որպէս աստուածային մատենից շարադրաքնեալ ։ Եւ գիրք ընդհանուրք և աստուածաներկ մա- տանցն , և բանք հոգեշարժք լեզուին արտաքրերեալք 'ի յարմարահանճար մարդն՝ ասոր և գեր 'ի վերոյ երե- ւելին մարթանականաց գիտութեանց և խրոց ։ Քանզի ոչ ունէր 'ի մարդ- կանէ և ոչ 'ի ձեռն մարդոյ , այլ 'ի ձեռն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սր- բոյ ։ որոյ մարթեալ և յարդարեալ էր զհոգի և զմարմին և զմիտս՝ առ- ձեռ և ընդունարան հանգստոց Երրոր- դութեանն ։

Ը ․ Իսկ սուրբ հայրապետն Գրի- գորիս , յորժամ անուանէր զայսպի- սի անձնաւորելի շնորհս և զիմաստու- թիւնն՝ աղբերաբար յառաջ ե- կեալ յեղբարեն 'ի սորայն Ներսե-

ան . խնդրէր հարազատաբար հոգե-
ւոր սիրով 'ի Նմանէ արծարծել այ-
նուհետեւ զաստուածային շնորհն ,
և լցուցանել զթերին 'ի կարգս ե-
կեղեցւոյ՝ յիշատակ նոցունց 'ի
սուրբ եկեղեցի սպասաւորացն թող-
լով ։ Որոյ ընկալեալ զհրամանս և
զաղաչանս աստուածայնոյ հայրա-
պետին , սկսանէր երգել զերգս հո-
գեւոր պաշտամանց զոր պակաս և
թերի գտանէր . և սուրբ ձեռինն
գրով աւանդէր մանկանց եկեղե-
ցւոյ՝ որք ժողովեալ ընկէրին առ նո-
րա յամենայն գաւառաց 'ի սպասա-
ւորութեան սրբոյ աթոռոյն , որք
իմաստունք և շնորհազգեացք՝ յե-
պիսկոպոսաց և վարդապետաց , 'ի
քահանայից և 'ի սարկաւագաց ։
Զի ոչ ինչ էր նոցա բան այնմ ժա-
մանակի սիրելի , բայց եթէ ընթեր-
ցող արանց և սաղմոսաց ժողով ։
Որով հարանցեալ եկեղեցի Հայաս-
տանեայց պայծառապէս զարդար-
մամբ շքեղանայր , հաւանեալ 'ի
Նմանէ աղջամղջին խաւար թանձրա-
ման 'ի յանկմանէ 3 ազգիս և 'ի

ծուլագոյն հովուաց 'ի ներքս մը-
տեալ . և լուսաւոր կարգ եկեղե-
ցւոյ 'ի սուրբ լուսաւորչացն հաս-
տեալ՝ յանխախտութենէ ազգիս
մերոյ բարձեալ , և խաւարու մառա-
ցութեանն նսեմացեալ խորթացե-
ալ անզգուշութեամբ : Նա ոչ 'ի
բնաւին նիւթականացս ինչ փոյթ
էր նորա . այլ որ ինչ եկեղեցւոյ
սրբոյ կարգ , և պայծառագոյն մաք-
րութեամբ յերկրպագանչիւրան մեղ-
սաքուին մարմնոյ և արեանն անմահն
անբիծ աստուածութեանն , զորս
պայծառս և առոյգս յարդարէր .
զգեստս մաքուրս և վայելուչս եկե-
ղեցականացն կարգէր , և հոգևոր
և մարմնաւոր սրբութեամբ ուսու-
ցանէր սուրբ խորհրդոյն պատարա-
գել՝ Նորոգէր զաստուածայնոյ հարցն
հաստատեալ կարգս եկեղեցւոյ . և
զարդարէր զեկեղեցիս Հայաստա-
նեայց անթերի լրմամբ : Նա հոգե-
ւոր երգովք և քաղցրանուագ եղա-
նակօք վայելչացուցանէր զսուրբ
պատարագին խորհրդականն երգսն .
որպէս զի թանձրագոյն միտք ան-

առաջոյն զաւրբ խորհրդոյն , նայելով յայնպիսի պայծառութեան ազատութիւն և արդարութեան խորհրդածութիւն , կանգնեալ անսաբասելի զգալի անտեսութեանն , և յիմանալի գիտութիւն հասեալ օգտակարն : Այսպէս փոքր փոքր առ նոյն յաւելեալ մեծութեան շահիցն հասանելեան , և պարզապար պարգևութեան անտեսութեան արժանաւորին : Երգեր և երգս առաջի քաղցրանուագ եղանակօք՝ յիմաստաբանի գաշնակելով՝ ի սանս անկրանիս , և յիշատակս առաքելոց և մարգարէից և մարտիրոսաց :

Այս Թէոդէա և հրաշալիք էին բանք երգոց նորա առ միտս խմաստութեան , բայց և առ առաւել զարմանալի էին արուեստք զանազանեզանակաց զոր անհնարին միտնաց յորինելը . որպէս անծանօթէի և յառաջագոյն զանձնաբանել ի Յոյս և ի հայրենեաց մտացն արտաքսելեալ : Այգի փայլելուցք և զարկագոյնք էին առաջնեալքն առ ի նմանել և հոգևով որով մի՝ այնր ազգաւ յամարա-

պէս 'ի միտ առնուլն զնոսա · զի իբրեւ ազգի համեմատեալք էին · և որ- պէս 'ի Ճանապարհս Ճարտարաց քե- րեալ անդէզ և անդրծական բարեաց : Ըանէք և առաքաշափութեանց մի- աբանութեան հանգոյն ազգեցն համբոյր շարակարեալ և 'ի մի գիծ ուղղեալ , մանաւանդ թէ եւս ա- ռաւելեալ հոգւոյն խնամովք հա- ւատոյն եղբայրաց : Շարագրէր բանս աղօթականս նոյն արտասուե- ալս , ակնեալ 'ի նախնին հօրէն մեզ 'ի կատարած յաւիտենից այսմ · և ընդ 'ի նմա զմիտս և զզօրութիւն հնոյն և նորոյս , և զբովանդակ յան- գուածս ազգին մերոյ գծիւ յօրի- նէր : Ըանէք և խոստովանական դա- ւանութեան սրբազան աստուածա- բանութեանն առ սուրբ Երրորդու- թիւնն և միանական աստուածու- թիւնն և Որդւոյ անդրէնութիւնն ըստ ուղղափառ դաւանութեան սուրբ հարցն՝ նոցին առաքաշափու- թեանց , յորս ընդունելի և հա- ւանական ընդ հանուր եկեղեցւոյ ուղղափառաց և խնամախառն քրի-

նոցայ։ Գրեր և ողբս 'ի վերայ տա-
ման մեծին Եդեսիոյ նոյնին արուես-
տիւ յոյժ գեղեցիկ և յարմարական
պատմութեամբ, որ զամենայն ըն-
թերցողս շարժէ։ Նա և զեօթնից
պատմագրութիւն 'ի Մովսէսէ Խորե-
նացւոյ յաղագս նախնեացն Հայոց'
վերասին շարագրութեամբ պատ-
մէր, սկսեալ 'ի ստեղծմանէն Ադամայ
և 'ի նախնեայն մեր Հայկայ, և հա-
սուցեալ մինչև 'ի հարս խորհեցոյ և
յինքեանս։ Գրեաց և զտրբոց հրեշ-
տակապետացն և զերկնաւոր զօ-
րաց ի Ճառս ներբողական, և բա-
ցայայտեաց 'ի նմին գլխոս խորա-
գոյնս որ յաղագս նոցին ծածկեալ
էր 'ի գիրս սուրբս. որպէս և երգս
խորհրդականս և պաշտաճառութեան տ-
ւօր տանի նոցին, և սասաուած-
իմաստ չնորհացն պայծառացուցեր
յիշատակի նոցին։ Յեղյեղէր և ըղ-
ձաւա այլ և ընթեր և ընդ 'ի նոա
քաղուցմ իմաստ բանին և խորատ հո-
գևորս, և 'ի քաղուցմ ամեցին 'ի նո-
խազին առանց գառուրս առանձին իւր
կարգեր, որպէս և յայտնի է ան-
ներուն։

Նա լցեալ անձկալի կամօք շնոր-
հաց հոգւոյն սրբոյ , իբրեւ զծով
համատարած ինքն առ ինքեան ծը-
փայր մէջս : Նա իշխանութիւն մեր
բարձեալ , և եկեղեցի մեր խորթնա-
ցեալ , և աշխարհն մեր յաղթող
տարրաց աւերեալ , և յետին գառ-
նագոյն և չար ժամանակի պատա-
հեալ , ցրուեալ լինէին ամենե-
քեան առ սէր աստուածայնոյն , և
ոչ ոք էր որ խնդրէր յայնպիսւոյն
աստուածամուխ անձն գտանել ի-
մաստից , կամ զմեկնութիւնս խո-
րին խորհրդոց , զանխնացելոց 'ի
սուրբ կտակարանս , առ 'ի յօգուտ
մանկանց ազգիս մերոյ՝ յիշատակ բա-
րեաց յառաջագոյն զինի եկեղեցւոյն
թողուլ : Նա այսր աղաղակաւ ծարաւի
մանկին յանդարտ աղբերէն , և աղ-
բերք և թարմութիւն յանձնկալ ձը-
նութենէն : Նա քանզի կատարեալ
էր նա աստուածային իմաստու-
թեամբն , ոչ կամէր առանց խնդրոյ
յանդիմանս բաշխել զհոգւոյն շնորհս ,
և բանս պարառուանաց կերել շնոր-
հակալութեան փոխարէն :

Եւ որդ թէպէտ և ունէր զգի-տութիւն 'ի կրթութենէ վարժ-մանն , ուստի և յայս յայտմանէ էր . զի յարաժամ մելան և քարտէս պատրաստական լինէր մերձ նմա առ 'ի գրել . և նա անպարապորդ միշտ մտանէ ան 'ի ձեռս ունելով ընթեռ-նոյր , և որանէր և քննէր անդադար զխորհին միտս գրոց նուրբ տեսու-թեամբ , և 'ի կարծ երկարագոյն աշխատութեանցն , թէ պատահէր փոքր մի յարել 'ի բազմոցի և սակա-ւինչ նիրհմամբ հանգչէր , շրթամբք նորա իբրեւ 'ի յարթնութեան շար-ժէին և խաղային թելադրութեամբ Հոգւոյն սրբոյ : Որոյ զկնի իբրեւ 'ի խոմանէ ումեքէ զարթնոյր և ա-ռեալ փութապէս զպատրաստա-կան քարտէսն գրէր արագ արագ , զոր 'ի տեսլեանն առեալ լինէր 'ի Հոգւոյն սրբոյ , և դարձեալ ննջէր . և նոյնպէս լինէր այս առ նմա հա-նապազ :

Ունէր և այլ հրաշալի շնորհ ա-ռաքինութեան . զի յայտնէ հետ 'ի զգայութեան եհաս , ոչ ումեք 'ի

մանկանց զանկատար ձայնեայ զա-
նան, զոր ամենայն ազգք մարդկան
ատրապար ունին, և ոչ ունիք մա-
կանուն առաջ։ Այլ որպէս երկո-
քումք հոգիացեալ էր և լուսաւո-
րեալ աստուածային լուսովն, Այս
վերաձայնէր ամենեցունց անուն մե-
ծի և փոքու։ Նա և այնչափ զբըռ-
նութիւն մարմնոյ ամենեայ և հնա-
զանդեցոյց աստուածութեանց պա-
տուիրանին որպէս զանմարմինն զօ-
րով. և զամենայն ժամանակս կե-
նաց իւրոց ոչ խառնեցաւ ընդ գա-
տարկս և ծիծաղելիս. այլ զոր ինչ
խօսէրն բան՝ լինէր հոգևոր. յոր-
դորումն ՚ի բարիս, պատճառք սի-
րոյ. խրատք առ ՚ի գործս առաքի-
նութեան, մերձ ընթերցումն, և ա-
ղօթք արժանաւորք ՚ի ատրը արար,
խոստկցութիւն ընդ Աստուծոյ։ Եւ
զիրաւ զգաստութիւն անձին և մար-
մնոյ երաստանական առաքինութեան
ուղղէր անտայթաք յընթացս աս-
տուածայնոց շաւղաց. պարկեշ-
տութեամբ առ հարկաւորսն, և
ծնչմամբ առըր և ամենամաքուր

մարմնոյն յլուս մարմնոյան , զմար-
մնական ցանկութեանցն ամենեւին
ցամաքեցուցանէր զաղբերս ։

Եւ 'ի նմա և այլ ինչ առաքինու-
թեան կիրք , որ առաւել գերագոյն
է այլոց բարեաց մասանց , զոր կա-
րի յոյժ գժուարին յերկրածնաց
ոք ստացական ձանիւ կարողանայ
ստանձնել . զանձնագովելի հեզու-
թիւնն ասեմ , զոր ունէր համագոյն
մեծի նախամարգարէին Մովսէսի .
որ ոչ մասնաւորութեամբ ըստ ժամոյ
ուրեք . այլ զամենայն աւուրս կե-
նաց իւրոց ոչ ումեք բարկացաւ . և
եթէ լինէր 'ի պատճառաւէ իմեմէ
բան և կամ գործ յումեքէ արժանի
բարկութեան , նա և ոչ արտնէր
կամ ցուցանէր բարկութիւն ինչ ,
այլ հեզ և քաղցրագոյն բանիւ ա-
ռնէր . Նոյս , եթէ ոչ յիս խնայէի
բարկանալի քեզ ։

Եւ այս էր նորա բարեաց առա-
քինութիւնք մէջս , որ 'ի վեր է քան
զմարմնոյ բնութիւն ։ Զոր անեալ
եղբարն գոհանայր զանեառնէ ոչ
այնպիսի մեծի փարթամութեան

եղեւ ունող. և այնչափ մեծ սիւն հաւատոյ եւեթ հաստատեալ ՚ի սուրբ Եկեղեցի յորովայնէ ծնողաց իւրոց ։ Որոյ ընծայութեամբ անթերի յօրինմամբ զարդուց ճոխացուցանէր զեկեղեցիս Հայաստանեայց ։

Է. Ընդ այն ժամանակս ազգ Իսմայելեանք մահմետականն . . . զաւանմանն բռնացեալ զօրացան յոյժ յելքին արեւու մինչեւ ՚ի սահմանս Եփրատայ արեւելք ։ Իսկ ազգք և զօրութիւն քրիստոնէից որ ըստ որէնուպէր . ։ Նորա ըստ յանցանաց մերոց յաւանային . և զի ՚ի ատեանէ ինէր այս յաղագս մեղաց մերոց տկարս առնելով մեզ, Նորա կարծէին . . . պաշտամանն իւրեանց հաճոյութեան սա. Աստուած տիրել այոքան աշխարհաց և գաւառաց, և փութայեալ զազանաբար յարձակմամբ ջանային միահաղոյն բառնալ ՚ի մէջոյ զազգ քրիստոնէից ։ Որ զայնու ժամանակաւ զհօյակապ և զամենավայելուչ քաղաքն Եդեսիայ,

որոյ տիրէր աստուածատուր կամաւն Ջաւալին, շուրջ պաշարեալ անթիւ բազմութեամբ այլազգեաց հնարիւք բազմագլխի մեքենայիւք՝ առին յաւարի և մաշեցին առ հասարակ զամենեսեան 'ի սուր սուսերի, մինչ զի պղծապարակս նորա արկանէր առագեցին։ Սկսան ապա լալ և ողբ ալեգին, և որ ընդ որս անձկացուցանել զգիրատենայս մինչեւ յափըն Ովկիանոսի։ Նախն և զբազում զՄարաշ Գերմանիկէ, յաշխարհէ մեծին Անտիոքայ, և ուշ եղին ընքինք ամենել զազգ քրիստոնէից։

Եւ որք թէպէտ և 'ի բնիկ ուխարհէն վտարեալ էին առաջի հաբապետին Հայոց, որք երկիցագոյն աթոռն էր զառաջինն՝ 'ի Շիրակաւան անդ, բայց զայնու ժամանակաւ զետեղեալ ունէին զկայանս բնակութեան անդր Գրիգորիոս տէրզերանելոյս եղբարբն Ներսիսիւ յեկեղին Անտիոքայ, 'ի գաւառին Տելքայ, 'ի փոքրագոյն գիւղին Ծով կոչեցեալ. և ապաթէին առ ան սարեցուցանել զնոսա 'ի շարո-

Թոյն այլասեռութիւն և 'ի մարդադէմ
գազանոյն ։ Որ և փրկեալք լինէին
և ապրեալք որպէս ճնճղուկ յորո-
գայթէ որսողաց ․ քանզի ահր ձե-
ռնկալու էր նոցա բան մարգարէին ․
Իսկ ապա տեսեալ զանկարութիւն
զօրութեան մերասնեութիւն , երկեան
պատարել 'ի նախատասցեալ գեղեանն
նով ․ քանզի ոչ ունէր այնչափ ամ-
րութիւն , որ եթէ կարող գոյր
փրկել զնոսա յաշխարհակործան
բարկութենէն ։ Վասն որոյ դէմ ե-
դեալ կամէին իբրեւ ընդ մէջ ծո-
վական ալեաց Ճանապարհ առնել
և անցանել յարեւելս , ուր կա-
լեալ յանդ զօրացեալ իշխանան
անն Վրաց և Թագաւորն Աբխա-
զաց ։ Այլ տէրն գթած որ միշտ
ձեռնկալու է արդարոց և ոչ տայ
թոյլ կործանել նոցա՝ անօրինաբար
ներգործեալ աստուածայնապէս ,
պարգեւեաց նոցա զանմատչելի ամ-
րոցն Հոռոմկլայ , մերձ առ ափն ա-
գինարուղխ գետոյն Եփրատայ , 'ի
ձեռն աստուածասէր տիկնոջ բա-
բերանեալ կամօքն Եղեւնայ Ճաւա-

ըմպէին ։ Որոց անկեալ 'ի նմա աղջա-
նօք և ամենայն զարմիւք , և տաժա-
ւորք և ամենայն ընտանեօք որդւոյ ա-
թոռոյն , խառնազգացն անդրորդութեամբ
'ի կամակատարաց և յերկրեւոյէ չա-
րաչարեալ բռնաւորացն ։ Եւ թեթեւ
և այլ շուրջանակի գաւառքն առան
յայլազգեաց մինչեւ 'ի մեծն Ըն-
դիրք , այլ նոքա անփոփոխ մնային
ամբողջեան տեղւոյն ապաստան է
պաշտպանութեան երկնաւորաց
Ձեռին Հզօրին ։

Իսկ սուրբ Հայրապետն Գրիգո-
րիս հանդերձ սուրբ եղբարբքն ա-
ռաւածային խմաստիւք զամենայն
պետս և զբանաւորս և զհօտեան իւրեց
և քարոզիւք ամենայնիւ զազգայնոյն
ծախողաց զեկեղեցւոյ զառաքինի հա-
մարէր 'ի խաղաղութիւն , և անդ
բազմաք հասեալ 'ի բարիւք ծերու-
թեան՝ կայր անդրորդութեան մեծա-
գոյն և ընդունելի առ Հաւատոյ Թըն-
նամին ։

Ը ․ Ընդ այն ժամանակս անէր
զանկարութիւն ըեաւնայքն կողման

փախուցացեալ քաղաքոր իշխանն Թէոդորոս ։ Տիրէր և իշխանն Աւշին անառիկ դղեկին Լամբրունի 'ի լեառնն Տաւրոսի՝ վերադիտակ մայրաքաղաքին Տարսոնի, և յազգամնէ չարին մախոյին ընդ մեծանս. և վասն այսր պատճառի ոչ փոքր ինչ խռովութիւնք և հեղմունք արեանց լինէին 'ի մէջ երկուց իշխանացն. մինչև հարկ լինել արքայական կաթուղիկոսին տեառնն Գրիգորիսի շարժել զկրօնաւորսն և զիմաստունսն եղբայրսն իւր զարքեպիսկոպոսն զանէր Ներսէս տալով 'ի մէջ նոցա, թերևս խոսով խոհեմութեանցն հնարեսցի զհաշտութիւն նոցա ։ Որ և աշխատասիրաբար ճանապարհորդեալ գայր առ նոսա և զհաշտութեան գործն աւարտեալ կատարէր 'ի ձեռն իւրոյ միջնորդութեանն ։

Եւ յայնժամ պատահէր նմա ըստ փակուածոյ ճանապարհին մտանել 'ի քաղաքն Մամեստացւոց, ուր էր Թագաւորազարմ իշխանն, առաքելով յերկնակալէն Յու-

նաց Կիւրամանիկէն, զորս կարգեալ կացուցանէր արքունական. փեսայ գոլով թագաւորին. այր կորովամիտ և հանճարեղ, պատուով յառաջին հեծելազօրացն. բայց յանուանս բարբառոյն՝ պատմութիւնք յորջոր- ջեալ։ Սորա անուամբ գեղեցկահանճար իմաստասէրին և զանեղծելուցանելոյ վար- դապետն, և զխոնհականն աշխարհին Հայոց. յորժամ տարաքս եղեւ. որս- խոլթիւն մեծ, յայս արարեալ է թէ մեծ անձնուէր և խիզախ բազմա- նաց ունելի խաւսել ընդ մեծ յա- ռաւանկարանց գիրս։ Յայնժամ կը տարբերայն յիմաստս ասպանութեան ընդունելի զհայրութեան, և ՚ի հայ- ցուն բանին պատմաբանութեան հա- նեցուցանելի գրաբարութեամբ իմաստ. Որ և թարգմանեալ զերկրաքնեղն ի դաստիարակութեան Հայաստանեայց ըն- թանալ տարբերայն զգեղ սպարու- կեալ ասացէ նմա։ Որովհետեւ հաս- նելով հանճարականն խնդրոյն կաս- րեւոր զհաստատել հայցումն, զը- նելոց զմեր դաստիարակութեան հաս- տալ, զհամայն եկեղեցւոյ, և եւ

ձեռն յառաջասացելոյ բարեպաշտ իշխանին, այսպիսի օրինակաւ.

Խոստովանիմք զամենասուրբ զԵրրորդութիւնն զՀայր և զՈրդի և զՍուրբ զՀոգին յերիս անձնաւորութիւնս բաժանելով, և 'ի մի բնութիւն և աստուածութիւն միաւորելով. Հայր անծին և անսկիզբն յառաջ քան զյաւիտեանս. Որդի ծնեալ 'ի բնութենէ Հօր, անախտ և անփոփոխ, նախ քան զժամանակս. Հոգին սուրբ բղխումն 'ի Հօրէ, ոչ ըստ Որդւոյ ծննդեանն, այլ յառաջ եկեալ աղբերաբար. Բնական միայնոյ քննելի օրինակին, և յարարածոց անզննելի. Նա ոչ՝ էր երբեմն Հայր՝ յորժամ ոչ էր ընդ նմին Որդի և Հոգի. այլ որպէս Հայր միշտ Հայր և ոչ յետոյ ստացեալ զանուն Հայրութեան. նոյնպէս և Որդի միշտ Որդի, ընդ Հօր իւրոյ միանգամայն. այնպէս և Հոգին սուրբ միշտ Հոգի Աստուծոյ, անմեկնելի 'ի Հօրէ և յՈրդւոյ։ Մի էութիւն, մի իշխանութիւն, մի կամք, և մի արարչագործ զօրու-

թիւն յերիս անձնաւորութիւնս ի-
մանի. ոչ մեծութիւն, և ոչ փոքր-
կութիւն. ոչ բարձրութիւն, և ոչ
խոնարհութիւն. ոչ առաւելութիւն
և ոչ նուազութիւն. այլ մի կարգ.
մի պաշտօն, մի երկրպագութիւն
սուրբ Երրորդութեանն դաւանիմք,
որով գոյացան յոչնչէ եղեալքս ա-
մենայն. երկնիքս երկնաւորօքն, և
երկիրս երկրաւորօքս, երևելի և
աներևոյթ արարածք յառաջին
եղեալ արարչութեանն։ Իսկ յեր-
կրորդումն մի յԵրրորդութենէն
Բանն Հօր Որդին միածին կամաւ
Հօր և Հոգւոյն սրբոյ աւետեաց
հրեշտակապետին Գաբրիելի էջ յա-
րգանդն կուսին Մարիամու, ոչ
նուազեալ 'ի ծոցոյ Հօր ըստ ա-
ստուածային անպարագրելի բնու-
թեանն. և ձգեալ ինքն յարենէ ա-
մենամաքուր կուսին որ 'ի զանգուա-
ծոյն Ադամայ, որ միացոյց ընդ ա-
ստուածութեանն իւրում անշփոթ և
անճառելի խառնմամբն, և եղև
երկուց կատարելոց բնութեանց
յաստուածայնոյ և 'ի մարդկայնոյ

մի անձնաւորութիւն կատարեալ անայլայլելի և անբաժանելի բնութեամբ ։ Ոչ փոփոխելով մարդկային թանձր և յօդական բնութիւնս յանյօդ և 'ի պարզական բնութիւն Աստուծոյ՝ զիւրն կորուսանելով ։ Եւ ոչ պարզ և անմարմնական բնութիւնն Աստուծոյ խառնելով ընդ բնութեան մարմնոյ՝ փոխել այլ յիւրն յաւէտ պարզութենէ ․ Թէպէտ և աի անմարմնոյն մարմնանալ և Բանին թանձրանալ յաղագս անճառ միութեան ։ Այլ և խառնի ընդ մարմնոյ անմարմինն բանն , և միացուցանէ ընդ բնութեան զմարդկային բնութիւնս՝ աստուածացուցանելով զնա խառնըմամբն և միաւորութեամբն , ոչ փոփոխումն կամ այլայլութիւն ունելով 'ի միաւորութեան , ըստ որում և հոգի և մարմին մարդկան ․ Թէպէտ և գերագոյն քան զիմանալին խմանի Չմարմնաւորութիւնն , որպէս ընդ տարրից և ընդ արարած գոլ համաձայնութեան ։ Այլ միաւորեալ ընկերս ընդ խորութիւն անհասանելի յեղանակաւ , և միացեալ անփոփոխա-

ւորն և առնելոյն ։ Ոչ բռնադատապէս
սիրեալս ազգ և քաջք առնանի , զի յաջ-
տուքս եղանելոյն զատապելանայ . այլ
բնաւորացեալս միջամտոյ՝ի վեր յան-
գրան անդրադառնալ և անշփոթ մի-
ութեամբ ։ Նա առնելով զբնութիւն
Ադամայ ոչ զոր յանձնարութեանն է
գրաւական , այլ զոր յետ միջամտոյն
և ապականութեանն . զի և կոյան
Մարմնով յորմէ մարմնոյն առ Վերա-
տու ՚ի միջամտութեանն Ադամայ
բնութեանն էր ։ Առակայն միաւորե-
լով ընդ բնութեանն Աստուծոյ,
միջամտութեան եղեւ անձամբ , և տապա-
կանոգունս արարողաց անդրանկելք ա-
պականութեանն կրից ։ որպէս է
հրաշալելի նորութեն յորժամ ընդ
հրոյ միանումն՝ ժամեր ապականու-
թեանն եթէ ինքն ընդ նոսա՝ ծածկ-
ևոյ բնութեանն մարդկելով յառա-
կանութենէ՝ անձնափելոյն մեղայ ։ Զի
որոյ ակնկալին անապականն ՚ի կաւե
էր ծննդեան , և կատարումն անա-
պականն ։ զի մարմնոյն նորա ՚ի գե-
րեզմանին ոչ եկեալ զապականու-
թիւնն ։ հարկ է զի և ՚ի մէջ ժամա-

Նախքին որ ընդ ծնունդն և ընդ մահն՝
լինել անտարակուսն ։ Ոչ 'ի հարկաւոր
և 'ի կամաւոր կիրսն սակայն անտա-
րակուսն, այսինքն քաղցոյ և ծարաւ-
ոյ, ննջելոյ և վաստակելոյ, արտա-
քելոյ և արտասուելոյ, որք ճշմարիտ
և ոչ առ աչօք առն խնամով մեզ զա-
րականութիւն, զի եր ինչ 'ի նմա
նման մերումս, և եր որ 'ի վեր քան
զմերս ։ քան զբնականն՝ թէ մարդ
է և 'ի վեր քան զմարդ ։ և թէ մարդ
է և մ՛ ծանիցէ զնա ։ Արդ բաս ո-
բամ՝ հասանելոյ այսպէս եղեալ
մասնաւորութեանն յեղանակ յար-
ժանդի կուսին, ընակելով 'ի նմա
ինծանութեան մտանանակա, հինգ-
ւորելեալ ստուգիւ բաս անդգրան-
կութեանն Ե ։ Այլ այն որ կարողն
եր 'ի միում վայրկենի լինել կա-
տարեալ, որ բաս որէ անձնանի զար-
գանալ, որպէս զի խափանեսցի այ-
սպիսի առ աչօք կարծել զմարդէ-
ղութիւնն ։ Այլ ծնանի որպէս մարդ
Աստուած մարդացեալ՝ զկուսու-
թիւնն ծնողին անապական պահե-
լով, զի և զծնունդն որչնեսցէ յա-

Ներծլոյն , և զհոսատութիւնն Նախա-
պատուելոյն : Թլփատեցաւ ութօ-
րեայ , զի զուխտն որ առ Հարսն
կատարեսցէ , և մեզ ուսուսցէ ըզ-
թլփատութիւն սրտի հոգեւորա-
պէս : Եկն 'ի տաճարին քառասնօ-
րեայ ըստ օրինաց յընծայումն . զի
զմարդկայինն բնութիւնս նիւթեամբ
ընծայեսցէ Հօր 'ի բարձրունս : Փա-
խեաւ յԵգիպտոս , զի զմարդկու-
զութ կռապաշտութեանն զարմա-
ցէ յաստուածպաշտութիւն , և ըզ-
մեզ խրատեսցէ յամարութեամբ
փախչել ընդ Նմա հալածանաց :
Շրջեցաւ յաշխարհի ամս երեսուն
աղքատութեամբ և խոնարհու-
թեամբ ծածկելով զաստուածու-
թիւնն , զի զմեզ ճոխացուսցէ
բարձրացուսցէ . յորժամ նորին
Ճանապարհին լինիցի հետեւօղ :
Եկն 'ի Յորդանան 'ի լնուլ երեսնից
ամաց յայտնելով զփառս ա-
ստուածութեան խորոց վկայու-
թեամբ Հօր , թէ Դա է որդի իմ սի-
րելի , և Հոգւոյն աղաւնակերպ իջ-
մամբ : Մկրտեցաւ 'ի Յովհաննէ ,

զի զջուրսն օրհնեսցէ, և զհնութիւնն մեղացն ընկղմեսցէ 'ի նմա, և զհոգեւորականն մեզ տացէ մկրտութիւն ըստ վկայելոյն Յովհաննու, թէ Նա մկրտեսցէ զձեզ 'ի Հոգին սուրբ և 'ի հուր: Պահեաց քառասնօրեայ աւուրս երկրորդ Ադամ վասն առաջնոյն Ադամայ զի ոչ պահեաց, և յաղթեաց երիցս փորձութեամբքն յաղթողին մարդկան. և յետ այնորիկ սկսաւ զծածուկ աստուածութեանն իւրոյ զօրութիւն յայտնի առնել աշխարհի: Զդեւս հալածելով, զհիւանդս բժշկելով, զկաղս գնացուցանելով, զմեռեալս յարուցանելով, 'ի վերայ ծովու որպէս 'ի ցամաքի գնալով. 'ի սակաւ հացից զբազումս կերակրելով. զբնութիւն արարածոց որպէս կամէր փոփոխելով. զՋուր 'ի գինի. և զկոյրն 'ի լոյս դարձուցանելով. և զլոյս աստուածգիտութեանն իւրոյ զծածկեալն իբրեւ վարագուրաւ ընդ մարմնոյն յայտնեաց աշակերտաց իւրոց 'ի Թաբորական լերինն նախ քան զչարչարութիւնն, առեր զինքն ծանու-

ցանկալով կենդանեաց և մեռելոց
իշխանութեան հաշտեցին Մովսէսի և
Եղիայի: Գայ այնուհետև կամա-
ւորութեամբ յԵրուսաղէմ 'ի չարչա-
րանս, զի զերիս օրինաց և մարգա-
րէից լցցէ: Նաև 'ի վերայ խաչին և
յամենայնի, օրինակ եկեղեցւոյ
Հրէից և հեթանոսաց: Կատարեալ
զզատկին բառ օրինացն, զի զհինն 'ի
նորս և զառաւելն 'ի ճշմարտութիւն
փոխեսցէ: Լուանայ զոտս աշակեր-
տացն, զի զնախահայրն ամեն որ 'ի
ծառն գիտութեան ընթացից մա-
քրեսցէ զյանցանսն: Տայ զմարմին
իւր կերակուր կենաց և զարիւն իւր
'ի քաւութիւն մեղաց: զի որք աղա-
գոյն ճաշակմամբ մահացան, զա-
տակեն ճաշակելով կենդանասցին:
Աղօթէ խնդալ ընտութեանն առ
Հայրն վասն իմ, զի յաւաքինն զոր-
ծեսցէ 'ի փառս. և զի տացէ օրինակ
աղօթից և մեզ 'ի փորձութեան ժա-
մուս: Տրտմեցաւ և արտասուեաց
ուրախութեանն պատճառն երկնա-
ւորաց և երկրաւորաց, զի Խորհրդ
զամենայն արտասուս յամենայն երե-

ւոց բան Եղայեալ ։ Երկինս , զի զերկնայինն լուծեալ զանձանս ։ զորա֊ նեցաս , զի զանձինս երեսացն Աստ֊ ւածոյ ընծայեսցէ ։ ապաշխարեցաս՝ զի զա֊ նձինդ ծածկեալ նախանձոյն սատա֊ նայի ։ եւ որդ զեզին՝ զի զգուռն մե֊ ղացն ծանրակ քաղցրացուցէ ։ բժ֊ շկեցաս 'ի խոցին՝ զի զմեղս աղձա֊ կեսցէ 'ի կապանաց եւ շնորհեսցէ փառս կենաց փոխանակ փայլին նուհա ։ Մեռաւ խափանարար մարդ֊ կային մահկանացու բնութեան , եւ մեզ կենդանի առատանային ան֊ մահական բնութեան ։ Ոչ ոմն մե֊ ռեալ եւ ոմն կենդանի բառ բաժանո֊ ղայն ? , այլ մի եւ նոյն անձնաւորու֊ թիւն ։ եւ մի Աստուածն չարչարէր եւ մեռանէր մահկանացու մարմնովն որ 'ի մէնջ , եւ կենդանի էր անմահ եւ կենդանարար աստուածութեամբն որ 'ի Հօրէ ։ Որպէս եւ սուրբն Ա֊ թանաս ասէ , թէ Աստուածային մարմինն ոչ մեռանելով զանմահ աս֊ տուածութիւն , քանզի անմահ էր ։ այլ մեզ մահուանէ եւ իւրն ան֊ մահ անմահական զօրութեամբն ։ Եւ

յետ ամենայնի ասէ, թէ Մով-
մարմնոյն եւ զէն համագոյակցին մօ-
կանգնեցուցանողն ։ Վասն որոյ եւ մի
խոստովանիմք Աստուած եւ մարդ
զՔրիստոս ․ ոչ բաժանելով զա-
գուսն զայս ասելով ․ մի ընդ ․ զի նո-
յն ինքն է չարչարեալ, աստուածու-
թեամբն անփոփոխելի եւ ան-
չարչարելի ․ իսկ մարմնովն չարչա-
րեալ եւ զմահ ճաշակեալ ։ Յաղագս
որոյ մոլորին որք ասեն եթէ այ-
ոմն է որ չարչարեցաւ, եւ այլ ոմն
որ ոչ չարչարեցաւ ․ բայց ոչ այլ ո-
է քան զԲանն որ չարչարեցաւ եւ
զմահ ընկալաւ մարմնովն ․ զի նոյն
ինքն անչարչարելի եւ անմարմին
Բանն՝ ընդ մարմնոյն չարչարել
յանձն էառ ․ զի չարչարանօք փր-
կեսցէ զմարդիկ ․ քանզի որ ինչ
մարդկեղէնն չարչարիւք մարմ-
նոյն, զայն ընդ նմին զօրով Բանին
յինքն վերաբերելով, եւ ընկալ յայտ
հրաշափառութեամբն իւր ․ զի ինքն է
որ չարչարի ։ Չարչարիւք չարչա-
րեցաւ՝ զի իւր ինքեան չար-
չարիւք մարմնովն, եւ ի նմին ի չար-

բեկումն՝ և էր ինքն աստուծոյ չարչա-
րանաց, անբաժանելի 'ի չարչարա-
նելոյ մարմնոյն. զի Աստուած գո-
լով Բանն՝ անչարչարելի էր բնու-
թեամբ, սակայն ընդ չարչարելի
մարմնոյն. անբաժանելի միացեալ
անմարմինն: Եւ մարմինն անեղծ
յինքեան՝ զանչարչարելի բանն ըն-
ջինչ անապականութեանն իւրոյ: Զայսա-
սէ Աթանասիոս:

Ընդ նմին և մեք անբաժանելի
զաւանեմք զաստուածութիւնն յետ
մահուն 'ի մարմնոյն և 'ի մարդկե-
ղէն հոգւոյն. և յարժամ' 'ի խաչին
երեւի և 'ի գերեզմանին մարմնովն,
աստուածութեամբն էր ընդ աջմէ
Հօր և փառաց նորա լի էր երկինք և
երկիր: Էր և Հայր ընդ նմա յեր-
կրի, որպէս և ասաց. Հայր իմ ընդ
իս է, և ոչ եթող զիս միայն, զի որ
Հայր է՝ անդ է և Որդի և Հոգի. և
ուր Որդի՝ անդ է Հոգին և Հայր. և
ուր Հոգին սուրբ՝ անդ է Հայր և
Որդի: Այլ իջեալ 'ի գերեզմանն
մեռեալ մարմնով և կենդանի աս-
տուածութեամբն, որպէս աստ-

բանին դժոխոց , և յարուցեալ յեր-
կրորդ յաւուր , յորւոյ ընդ Նիկեան
'ի մեռելութենէ միայն զհոգիս
մարդկան հաստատեալ , և եա
յոյս մարմնոյ յարութեան բանին-
ութեան իւրում՝ յերկրորդ գա-
լստեանն ։ Եւ յետ քառասնօրեայ
աւուրց վերացաւ յերկինս նովին
մարմնով յանդիման առաքելոցն , և
նստաւ ընդ աջմէ մեծութեանն Հօր
'ի բարձունս բառ առաքելոյ ։ Գա-
լոց է միւսանգամ մարմնովն որով համ-
բարձաւ՝ դատել զկենդանիս և զմե-
ռեալս արդարութեամբ , և հատու-
ցանել իւրաքանչիւր ըստ գործս ։

Այդ որ յաղագս սորա Աստուա-
ծութեան և մարդկութեան
Քրիստոսի՝ այս է միջս Աշխարհ
խոստովանութիւն Հաւատոյ , զոր
համառօտ բանիւ եդաք առաջի ։

Թ . Եւ զենի սորա ուղղափառ
դաւանութեան գիրք երանելի Հայ
րապետն և զոր ինչ յաղագս կար-
գաց եկեղեցւոյ Հայաստանեաց , և
անտից կարգելոց 'ի նախնեացն սրա-

Ճաղք, և լուսաւոր և աստուած_
ուսոյց բանիւ ցուցանէր զբովան_
դակն գրոց վկայութեամբ՝ ունել_
մեր յառաջելոցն և 'ի նոցին հետևեա_
լոյն : Զոր ընկալեալ ամենն խնա_
մոյ պարգևական ընծայիւք պա_
տուեաց զերանելին և առաքեաց
խաղաղութեամբ յիւրն Ճանա_
պարհն : Որոյ դարձեալ 'ի հայրա_
պետական աթոռն առ նախապա_
տիւ եղբայրն :

Իսկ գրովն 'ի ճնու ամի իշխա_
նութեանն իւրոյ, դարձ առարեալ
'ի թագաւորական քաղաքն Կոստան_
դինուպոլիս, և առաքեալ ցուցանէր
զնամակ հաւատոյ հայրապետաց
բարեպաշտ արքային, որոյ անուն
Մաւրիկ, և հայրապետաց իւրեանց
համագերին կլերիկոսք մեծի եկեղե_
ցւոյն : Արանցոս հիւգաւ արքայն,
տեսեալ զգօրութիւն իմաստիցն որ
պարունակեալ էր 'ի բանին. հա_
ճեալ հաւանեցաւ և ընդ ուղղափա_
ռն խոստովանութիւն. և վարդա_
պետի զայր ունն 'ի ներբինեաց պա_
լատանն՝ թագաւորական հրամա_

նաւ առաքէ 'ի խնդիր սորայ եպիս-
կոպոսին. գրեալ թուղթ առ նա-
խապատիւ եղբայրն մեր Գրիգորի
յաղագս այսր իրի. զի անդանդաղ
առաքեսցէ զեղբայրն 'ի Թագաւո-
րեալ քաղաքն առ մեծ պատրիարգն
և առ սուրբ ժողովոյն և աստուածակիր
արքայն. որպէս զի գործ բարւոյ
իրաւամբք ըստ Աստուծոյ առ-
նեսցի, բարձցի պատճառն 8 որ 'ի
միջի մերում, և ոչ համարեսցի վէմ
գլորման և քար գայթակղութեան
Քրիստոսի, այլ վէմ անկեան եր-
կուց որմոց միացուցիչ, և եղիցուք
մի ամենեքեան 'ի Քրիստոս :

Իսկ առ նոյն առաքելոյ անցեալ ըղ
բաղում գաւառօք, գայր համանէր
յաշխարհն Միջագետաց 'ի հայրա-
պետական աթոռն զոր 'ի սկզբան
նշանակեցաք : Եւ գտանէր վախճա-
նեալ յայնմ ամի զկաթողիկոսն
մեր Գրիգորիս 'ի վեցհարիւր և
երկերորդ թուականութեան
Հայոց ; և կարգեալ յաթոռն զեղ-
բայր նորին զտէր Ներսէս : Առա-
ցանէր ապա զնամակն արքայական

նորապատակ հայրապետին զոր եղ_
բայր նորին գրեալ էր ։ Պատմէր բա_
նիւ և զփափագ բարեպաշտ Թագա_
ւորին յաղագս եկեղեցւոյ խաղա_
ղութեան ․ խակ նա ունէին մտատու_
ցեալ լսէր զամենայն քաղցրու_
թեամբ և միտ դնէր բանիցն զօրու_
թեան ։ Նա զի անհնարին էր յայն_
ժամ զխնդիր Թագաւորին կատա_
րել յաղագս ծանրութեանց լինելոյ
եկեղեցական հողովք՝ պատասխա_
նի գրէր Թագաւորին ․ և վերաին
երկրորդէր զդաւանութիւն մերս
հաւատոյ 'ի խնդրոյ արքային ․ և
ցուցանէր զպատճառս խափանման
խորոյ ընթացիցն առ Թագաւորն ․ և
գործուցանէր անդրէն պատուով
զԹագաւորական հրեշտակն ։

Ժ․ Բայց մեզ պարտ է ոչ ան_
տես առնել զեղանակ փոխման յաշ_
խարհէս սրբոյ հայրապետին , և
զյաջորդելն զաթոռն տեղերապահս
եղբորն ։ Նա որդ կացեալ երանելի
սուրբ հայրապետն ամէր Գրիգորիս
երկայն ժամանակաւ անդրամբա_

անդի քաղաքավարութեանց և հա-
ճոյական բարուց զհետն, զոր եւ ցնո-
Քրիստոս ըստ Պետրոսի թէ Աստ-
ծոյ զգեստաւորս իմ. որոյ կացեալ ՚ի
հաւատարմութեանն ՚ի մանկական
ածոյ և հասեալ ՚ի կատարումն հա-
սակի ըստ նախապետացն կարգի
նախ քան զխափանմանն ազգութն է
զեկալ նման ՚ի Հոգւոյն կոչեալ զե-
ղեկավարութեամբ և զմարգարէս ։
զհայրս սորոյ ըերինն և զօրս յաղ
կողմանց ՚ի ձեռնադրութիւն եւ-
բային ։ Նա թէպէտ և սուրբն ՚նէ-
րեա հրաժարէր ՚ի կոչմանէն, ա-
նարժան վարկանելով զանձն մեծ
մեծութեանն, սակայն բռնա-
դատեալ յեղբարէն և ՚ի ժողովոյ
ձեռնադրեալ զնա յաթոռ կաթո-
ղիկոսութեանն ազգիս Հայկայ ։
տանս Թորգոմայ ։ Նա իբրեւ կառա-
րեալ զզօրս հրամանին որ ազգն-
ցաւ նման ՚ի վերուստ՝ յետ երից
ամսոց փոխեցաւ իբր կոչմամբ ա-
Քրիստոս, դասաւորելով ընդ
հարցն՝ հայրապետաց, ընդ հաւ-
ծեալն վասն արդարութեանն՝ հալ

բերդն 'ի հալածանս և 'ի զանազան փորձութիւնս 'ի հակառակողացն ճշշ_ մարտութեան . որոյ և մահ պա_ տուական եղև . առաջի անուան բառ մարգարէին . կացեալ 'ի վերակա_ ցութիւն հովուապետութեան աշ_ խի Հայոց ամս յիսուն և երեք :

Իսկ սուրբն և ամենայն երանու_ թեանց արժանին 'Ներսէս' արժա_ նաւոր կոչմամբ նուաճեալ յաղթանակ հայրապետական , որպէս մեծա_ վաճառական , և հոգայր միշտ 'ի տուէ և 'ի գիշերի . թէ զիարդ կա_ րիցէ զհաւատացեալն իւր բանաւոր հօտ բառ քաջ հովուապետին հո_ վուել . զի մի ոք յանձնարարին զա_ զանէ որսացեալ պատառեսցի , և գիշատել կորիցէ : Բանզի , որպէս վերագոյն տասցաք , այժմարին ամե_ նայն յայլատեսիք բաժանեալ էին , և այլ մեր 'ի մէջ նոցա ցրուեալք ընդ ոլորտս անհեղեղաց . և ոչ գոյր հնար շրջել 'ի միջի նոցա և խրատել զնոսա և ուղղել բառ նմանութեան առաքելոց որոց . յաղագս ժամա_ նակին չարութեան և անխնամու_

թեան ։ Նա և ոչ գոյր քաղաքք թագաւորական յազգի մերում. զի անդ նստելով յաթոռ հայրապետաթեան և վարդապետութեան, 'ի տեղ և 'ի գիշերի ուսուցանելով ժողովրդեան մերոյ զաստուածային պատուիրանս ։ Եւ զի բաց թողու և լքանելըն 'ի հովուելոյ՝ անհատութեան համարէր նշանակ, անսանելով զգաստիս 'ի գայլոց յափշտակելոյս և անհեւս տանելապա յետ բազում և աշխատես հոգանհանգիստ լինելոյ՝ ածէր զնա գրելով սատարել յընդհանուրս և խօսել առ ամենեսեան զպատուիրեալսն յՆաստուծոյ 'ի հին և 'ի նոր կտակարանս. Նմանելով այսմ մեծի առաքելոյն Պաւղոսի, որ ոչ միայն շրջելով 'ի տեղս աշխարհ քաղաքէր զաւետարանն, որպէս և ասէրն, թէ Յերուսաղեմէ մինչև 'ի Իլիւրիկիա. այլ և 'ի կապանս գլով թղթովք հաստատէր զաշակերտեալսն ։

Եւ յայս խորհուրդ հաստատեալ գրէր շրջաբերականն նամակ և առ

քեր ընդ ամենայն աշխարհ , յարե-ւելս և յարեւմուտս , 'ի միջեր-կրեայս և որք ընդ ափեզերս երկրի ցրուեալք 'ի զանազան տեղիս . և զգուշացուցանէր զամենեսեան առ-աւածային պատուիրանացն պահ-պանութեանց : Զեպիսկոպոսունս , զերիցունս , զվանականս , զկուսանս , զզինուորս , զքաղաքականս , զա-միկս , և զամենեսեան ըստ իւրա-քանչիւր կարգի խրատէր կանոնա-կան առաջնորդութեամբ , որպէս և յայտնի են այսոքիկ գրեալքն 'ի մի-ջի մերում :

ԺԱ. Ի նոյն արկանէր վերստին և զողորմութիւնն զոր ունէրն նախկին բնաւորաբար առաքինութեամբ . և ըստ մեծի աստիճանին առաւելու-թեան առաւելուլ և 'ի աւուրն աղ-քատաց յայտնապէս և 'ի ծածուկ : Քանզի ունէր առատաբար առնել խորհրդագգած զոմանս ? իւրոց աշակերտացն՝ իւրում զանխլաբար խորհրդեանն՝ գնալ խնամել և քըն-նել , թէ ո՛ որ իցէ տնանկ և հա-

ուսեալ 'ի յետին աղքատութիւն , և ամաչէ գալ 'ի հասարակաց բաշխումն սպրդմութեանն և ծանուցանել նմա : Զորս իբրեւ խմանայր' առայր յետաւ ծրարս ոսկւոյ առատապէս , և հրամայէր ընկենուլ զայն ընդ երդս և ընդ պատուհանս նոցա 'ի գիշերի առ 'ի լինել նոցա 'ի լրումն պիտոյից խուրեանց . և զդաշադրյնս պատուիրէր զի մի ոք գիտասցէ . և այսու նմանեալք պատուէլոցորս հայրապետին Նիկողայոսի· Նա բաղում և այլապէս առաքինութեամբ զնախնին սրբոյն բերէր ըստ նմանութիւն յանձին . զմիշտ աղօթսն 'ի սուրբ սրտէ , զպահսն սրբութեան , զհամբերութիւնն 'ի չի զունս հողեւոր պատերազմին , ըստ ակրին առ Աստուած և առ անձնեալսն , զնախանձն 'ի բարիս , զհաւատն ուղիղ , զսէրն առ Աստուած , զանդրաւ հեզութիւնն , զընդ ամենայնի ամենայն լինելն , զխոնարհարութիւնն յաշխատութիւնսն , մշա և յարատեւ ընթերցմամբ և գրելով գրոցն աստուածայինս , և 'ի նոյ

խոկալով անդադար. և զայլ ամե-
նայն բարեաց անտակին, զոր ակա-
բանից լեզու պատմագաց մի բաւա-
կէ պատմել ։ Ունէր հաստատաբար
'ի մտի և զգրեալսն Պաւղոսի առ Տի-
մոթէոս, թէ Մի վաղվաղակի ձեռ-
նադրութեամբ ընդ այլս կցորդ մեղաց
օտարաց. և ոչ զայլ ինչ երկէր յա-
ւիտեան և պաշտօնէութեան կոչէր,
բայց եթէ զայս խոնարհութիւն և ըղ-
ջմտանկութեան, որք վարեալ և կիրթ
լինէին յօրէնս Աստուծոյ և բնու-
թեանց յերկեւղ նորա ։ Զորս մի-
ծաւ զգուշութեամբ և երկայնահա-
գի քննութեամբ ընտրէր 'ի բազում
աւուրս, 'ի ժամանակս, և այսպ
յետ աշխատելոյ ուսուցանելոյ և խրա-
տելոյ աստուածայնոցն, առնէր առ-
աջնորդս հովուութեան արժանիս ։
Եւ այնպէս բարւոք հովուապետու-
թեամբ զհաւատացեալս նորա հօտ
'ի արածանել 'ի վայրս դալարոջ և 'ի
ջուր հանգստեան աստուածայնոցն
գիտութեամբ լուսաւորէր ։ Եւ
ոչ ինչ էր նորա եղծանելեաց
փոյթ, բայց եթէ յօգուտ փրկու-

թեան հոգւոյ մարդկան տանել
ինչ՝ որով զիւրն ամենեքեանին և
բուսափայլ հոգի՛ ջանայր եւս պայ-
ծառացոյն զարդարել ։ Քանզի բա-
աստուածութեանց գիտութեանն որ
'ի Նմա՝ գիտէր թէ ոչ ինչ է սիրելի
Աստուծոյ որպէս զոգւոյ մարդկան
փրկութիւն ․ յաղագս որոյ և անձն
մեր և Աստուած զանձն 'ի մահ ետ։

Վասն այնորիկ միշտ զմերձաւորս
խրատէր աստուածախնամ բանիւք,
և զհեռաւորսն աստուածաշնորհ
ձեռայն գծագրութեամբ օգտակար
ցանէր հոգևոր խրատս ․ քանզի
ուր զնորահայեաց նամակս նորա ըն-
թեռնուին, որպէս յաստուածա-
հրաշ գրինց նորա պատկառելի
էր յամենայն ժամ՝ առանց ձանձ-
րանալոյ յաճախութեամբ և աս-
տուածային սիրով տայր հարցան-
ղայն զպատասխանիս բանիւ և
գրով ․ զդժուարահասս և զապա-
կուսական իրան հեշտալիս և քաղ-
ցրագոյնս մեկնէր, և մանածանէր յի-
մանալի առնէր և 'ի միտս խնդրողացն
բան 'ի վերուստ աստուածապարգե-

տուեալեաց նմա շնորհին . և ուրախ առնէր զամենեսեան առ. հասարակ բան խրախուսանացն սիրոյն , ՚ի հո-գեծնեալ և ՚ի մշտաբուղխ շնորհաց աղբերացն : Զմեղուցեալսն խրատէր միշտ և յանդիմանէր , և քաջալերա-գոյն և ողոք բանիւ սրտալի ՚ի կեանս . և զաղքատս և զատաղինոն յորդո-րէր տալ ՚ի գործս բարիս : Պարգևէր ՚ի վանորայս ծերունեաց և վանդալեաց եղբարցն՝ զանհեկանս և զգեստս ՚ի պէտս կարեաց նոցա . և զարդարէր զեկեղեցիսն ամենեցէն և արծաթեղէն անօթիւք , և պայ-ծառագոյն ամենեկար զգեստիւք բաշխման սուրբ մարմնոյ և արեանն տեառն . և յորդորէր զամենեսեան խնամոյն և զգայն պայծառութեամբ պատուաւորել կենարար և երկրպա-գելի սուրբ խորհրդոյն :

Նա թէ խնամոյս սրբոյ թէ իցէ որ յերկնայնոց կամ ՚ի աշխարհազաց որ ունիցի շնորհս և ուէր ՚ի հոգևոր գործառնութիւնն՝ վարդապետ ա-ռաքէր և ՚ի ձեռն գրոյ առ ինքն կո-չէր , և եւս առաւել յորդորէր ՚ի

նոյն, և ուսուցանէր և խրատէր յա-
րաժամ. և յոյժ սիրելի էր նմա այր՝
որ ունէր նախանձ և աշխատասիրու-
թիւն ՚ի բարիս և ճշմարիտ աստուա-
ծայինս. զորս թէպէտ և հոգևո-
րոյն Ծնողացուցանէր, այլ և ման-
կանցն ոչ թողոյր անխափանելի։
Եւ որպէս ընծայեալ Աստուծոյ,
զպատուականն ճշմարիտ ՚ի նմանէ և
ետուն պատուէր, սիրէր, և յորդէր
անձնախանձ մտօք որպէս հայր բարի
գթած և որդեսէր։

Վասն որոյ ընդհանուր եկեղեցի
հայաստանեայց ՚ի ժամանակս սուրբ
հայրապետին Ներսիսի լուսա-
ւորեալ ՚ի ճշմարիտ նորա, և պայ-
ծառացեալ ՚ի վերայ աստուածային
գոյն հովուապետութեան նորա
ընդ ամենայն աւելի գոհանայր ըն-
ւեստնէ որ այնպիսի լուսաւորիչ
՚ի զարդէ սրբոյն Գրիգորի պայծա-
ռայ նորա ՚ի յետին ժամանակս,
և աւարտ էին ամենեքեան ՚ի սէր։

ԺԲ. Բայց վերջին գանձ
պատճառ է մեզ ՚ի կարգ բանի արդար

հաւանեց որ առ սուրբ հայրապետն յաղագս միաբանութեան խնդրոյ առնել ։ Նորա առաքել զնամակս սուրբ հայրապետին Ներսէսի 'ի ձեռն Թագաւորին՝ ընթանայր 'ի մեծ եկեղեցին ցուցանելով ախեղերս. կան 10 հայրապետին եւ համագումար գասուց եկեղեցականաց ։ Որոյ հաւանութեանն ընկալեալ չինեին յառաջին գայթակղութենէն , զոր ունէին առ եկեղեցիս հայաստանեայց . մանաւանդ եւ սկիզբն արկանէին միաւորութեան եւ լուծանելոյ զկրճիտն պառակտութեանն ։ Բայց զի Թագաւորն՝ արեւմտեան աշխարհին չփոթմունք զբաղեալ , անհնարինայր գելյն յարեւելս բաւ հալածանաց հայրապետին . զայր ամն Ծառայապան փիլիսոփայ արարին զԸրակ կրթեալ եւ եկեղեցական սամանց Ծոխայեալ՝ վերստին առաքէր առ սուրբ հայրապետն 'ի հարց եւ 'ի փորձ . որպէս զի ամենեւիմբ 'ի վերայ հասցէ ճշմարտապէս կամաց Հայաստանեայց . Թէ աւարժելի է եւ

՚նոցա միաւորութեան խնդիր ։ Որոյ
եկեալ զնամակս արքային մտա-
ցանէր որբոյ հայրապետին , որ էր
գրեալ ըստ այսմ օրինակի ։ Եթէ
յօժարեալ կամիք 'ի միաբանութիւն
երկուց ազգացս բաժանելոց և զգի-
րի առաքեցէք առ ձեզ զԼ իշխան ։
Թագաւորութեանս մերոյ զմեծա-
թէոռէանս , որ եկեալ խօսեսցի
ընդ ձեզ զկամս Թագաւորութեան
մերոյ , և տացէ զապացոյցս սիրոյ
զոր ունիմք առ ձեզ և զկամս յօժա-
րութեան 'ի միաբանութիւն սիրոյ
բարւոք առաջարկութեանս ։

Զոր առեալ զնամակ Թագաւո-
րին և ընթերցեալ , սկիզբն արար
հարցափոխութեան ընդ այրն խօսա-
տանէր . և 'ի բազում ժամանակս
գեգերէին առ աստուածաշունչ
գիրս . էր ինչ յոր մի օրինակա-
նայէին , և էր ինչ զոր խտրաքանէին
որք այլով օրինակաւ Թարգմանեալ էր . և
մանաւանդ զԹուղթս սրբոյն Կիւր-
ղի որ առ Սուկոնդոս՝ զառաջինն և
զերկրորդն , որ յայտ առնէ 'ի բանս
իւր , թէ որպէս հարցն առաջին Ս

է բնութիւն բանին մարմնացելոյ ։ Եւ այս ոչ կամէր իմաստասէրն անգիտալ՝ ասելոյ անձամբ միաւորութեամբն մի բնութեան, այլ զերկուց բնութեանցն յատկութիւն անշփոթ պահել ։ Իսկ հայրապետան սուրբ երկոքումբն աստուածազինեալք ընդ առաջին որոցն, ընդդէմ նեստորականացն միաւորելով 12 ։ Եւ յաղագս այսր իւր վերածին գրեր առ Թագաւորն երեքկին զաւանութեամբ և առաքեր ընդ իմաստնոյ ւոյն, հաստատելով գրոյ վկայութեամբ զուղղափառ զաւանութիւն սուրբ հաւատոյ Հայաստանեայց ։

Իսկ նորա առեալ զԹուղթն հարցմանցն և պատասխանեացն, վասն զամենայնն 'ի գիր գրոշմեաց, ընծանայր առ Թագաւորն ։ Նորա 'ի ձեռին ունելով և զպէսպէս հարցմանցն նշանագրութիւն, և զՀայաստանեայց յօժարամիտ լինելն 'ի միաբանութիւնն, յայտնէր զգիրն որ 'ի սրբոյ Հայրապետէն առ Թագաւորն ։ Զոր ընթեռնուլ բարեպաշտօն արքային զուարճանայր և բեր-

կրկէս յանձն, մեծ համարելով առ-
աւածային եկեղեցւոյ զհաղորդու-
թիւն, քան զբոլոր Հռովմայեցւոց
տիեզերականութեանն յաղթու-
թիւն. Նա և անձնայն զաւր եկեղե-
ցականացն և անձնայն թագաւորա-
զարմք մեծի պալատանն ՚ի մեա-
ռևոյ զհնազանդութիւն հայր-
մանցն յայսկոյս յայնկոյս ընթա-
նային առ միմեանս ասելով. Տեսէք
զկաթողիկոսն Հայոց խոնարհ-
ծառայութեանն հանձնառու. Նոյն-
ցանկալ ընդ շաւիղս ուղիղ խոստ-
վանութեանն ընդ որ գնայ երանե-
լին բաղձանական զարմիւն. փառք Աս-
տուծոյ, որ տեսանելիք այսպիսի ա-
ռաքինոյդ եկեղեցւոյ ՚ի նուաստա-
ժամանակս.

Քանզի այլոյն խնամոտն ոչ էին
խորհրդական բանին և գիտութեանն
պատմութեանց հետազօտողներ զե-
տա, այլ առաւել ՚ի պանծալիս ժա-
րուցն պատմութիւն որում ան-
նմանն եղեւ, և զհեզահամբաւու-
թիւն Հօրն, և զպարկեշտութիւն
անձին, և զմտաւորական կրթու

Իբր եհաս՝ պատմէր առաջի ամենե-ցուն. և թէ որպէս 'ի Հայաստանեայն բնաբանասիրաց և 'ի պատմաբանութեան հանդարտ, խաղաղութեանն իմա-ցող և զաւրոյն օրէնս Հաստատող։ Այլ խրատեալ եղեալ մեծամեծաց և փառաւորաց՝ զառաքինութիւնն երկրորդ բնութիւն եղեալ, այսինքն զառաքե-լութիւնն որ առ Հայաստանեայս՝ 'ի գաղտա կարծեաց, 'ի սէր գոր-ծոյանէն։ Այս այնու Հետեւ էր ան-ամել մեծ համարձակութիւն մե-րոյ տեսիս 'ի թագաւորական մայ-րաքաղաքին եկեղեցիս և առ ամե-նեսեան արդարութեամբ 'ի Հայս և 'ի փորձ։

ԺԴ. Այս ինքն Հայրապետն Ներ-սէս յետ արձակելոյ զԹագաւորա-կան Նամակին բառ մերոյ գրեցեալ խոստման՝ ժողովեալ Հրաման Հանէր յամենայն Հայաստանեայս, սկսեալ յաթոռոյն յԱնդրանիկ մինչեւ 'ի կողմանս Սուրբարայ, և մինչեւ յա-րեւմտեայն կողմանս, զի ամենեքին 'ի միասին եկեալ եպիսկոպոսք և

վարդապետք . հայրք վանաց . ճգնող կրօնաւորք առ 'ի քննել զհնգից խաղաղութեանք , և ամենայն միաբանութեանք պատասխանել ։

Իսկ անդրանիկն գաւառականն Ըստուծոյ և անհատանելի խորքն 'յ նոյն ամի վերափոխեաց զերանելին ըզ Հայրապետն սուրբ , փոխադարձեալ յանմահ ճաշակն խաղաղութիւն , յանուանն աւագաստանի որ որ երկրաւոն էր , յաւուր հինգշաբթւոյ և 'ի թուականութեանս Հայոց վեց հարիւր քսան և երկու . և մնաց որ գործ անկատար մինչև ցայս վայր Վասնզի 'ի Ճգնաւորական կրօնի ակարագելով երանելւոյն բառ մաշմնոյ յայնժամ ճնշեր ցաւոց պարկեշտ անձն ։ Իսկ հաւատալ ամանայնին եղանակ 'ի վերայ ջերմոյն ազօթքն՝ տառապացուցանելը զաւուրն և վաղվաղակի վախճանելը ։ Սոյ մեծ հասկալ եկեղեցւոյ մեր և բավանդակ զարմեր . և ոչ միայն մեղայլ հասկալ հասմբանն 'ի թագաւորական քաղաքն , վշտանայր բազպաշտ աշխարհն և հառաչանք ամէ։

Մեծ զգայարան և արթուն բարձա-
ւորը եկեղեցւոյ Աստուծոյ . զըկե-
յան Հայաստանեայց յերկրորդ
լուսաւորչէն խրատուց . մի՛ երանե-
լի սուրբ Հայրապետ , զխաչդ զխնամ
փափուկ անկատար թողեալ ժամա-
նակէք առ Քրիստոս . ամենայն մեք
զարժանի յիշատակի անուան քո
ընդ առաջին որդոյն դատակարգեմք
անախմբելով ուրախութեամբ 'ի
Քրիստոս : Նա պատուէր հրամանի
եա 'ի Թագաւորական քաղաքին ե-
կեղեցին յիշատակել զնա ընդ ա-
ռաջին առաքելոյն անախմբութեամբ :
Իսկ զհոգեխացեալ մարմին սուրբ
հայրապետին Ներսիսի մեծաւ պա-
տուով և առաքինեաց և վարդապե-
տաց ժողովով , մեծապայծառ հան-
գիստ հանդուցին յարժանաւոր
գամբարանի 'ի հիմունս սուրբ և գե-
ղապանծոյն տաճարին , որ շինեցաւ
յանուն որդոյն Գրիգորի Լուսա-
ւորչին' յորդւոյն եղբօր Խորոյ 'ի
անէր Գրիգորիսէ . քանզի նա յաջոր-
դեաց զաթոռ հայրապետութեանն
Հայոց զկնի որդոյն Ներսէսի . որ և

տատանել զարդարեաց զսուրբ ա-
թոռն, ամենափայլելուչ տաճարի
շինուածք, և ճոխացուցին եկեղեցի
պատուական սպասուք. և ետ ը-
նկել զնշխարս սուրբ Հայրապետին
Նախնեայն խորեանց զանէր Գրիգո-
րիսի Վկայասէրի և ամփոփեաց ՚ի
հիմունս նոյն տաճարի մերձ ա-
ռամբարանս երկուց Հայրապետաց
Գրիգորիսի և Ներսեսի ։

Արդ կացեալ սուրբն Սահակ
՚ի Հայրապետութեանն ամս թի
բարութք և գեղեցիկ կենցաղավարու-
թեամբ՝ զընթացն կատարեալ
զհաւատոն պահեալ ըստ Պաւղոսի
փոխեցաւ յանվախճան և յերանե-
կեանսն, և հանգեաւ ՚ի դասս ա-
ռաքելոց և մարգարէից և ուղղա-
փառ հարց և վարդապետաց ։

ԺԴ. Իսկ ՚ի թուականութեան
Հայոց վերջացեալ թագաւորն և թի
զկնի և թագաւորն և եւթն ամի
բացափոխեալ որոց Հայրապետ
Ներսեսի, ՚ի հրամանէ և ՚ի յորդոր-
մանէ սուրբ վարդապետին Մաշտո-

Յու. 13 չարչարելեացն զպատմութիւնս սուրբ հայրապետին Ներսիսի և իւրոց նախնեացն Ճշմարտաճառն և ստոյգ պատմութեամբ, 'ի ժամանակս քրիստոսապաշտելոյ բարեպաշտ Թագաւորին Հեթմոյ յաշխարհին Կիլիկեցւոց, որ երրորդ է 'ի Լեւոնէ բարեպաշտէ առաջնոյ արքայէ այսմ՝ նախահաւրն.

Արդ վայելողք այսմ՝ լուսազարդ սրբոց արանց պատմութեանց, յիշեցէք զիրեալ 'ի Քրիստոս զմեղաւ Ծառայելոյ անուանս, և փոխարինեցէք առանց համառնելոյ յիւրաքանչիւր փոխարկութեանց, զի և զմեղ գրեալս Քրիստոս 'ի դպրութեան կենաց. որոց լիցի ամենեցուն՝ բարեխօսութեամբ սուրբ և երջանիկ հայրապետացն արժանի լինել արքայութեանն երկնից ընդ ամենայն սուրբս. 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր. որում վայել է փառք. իշխանութիւն և պատւի յաւիտեանս. ամէն :

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Յօր. ու անընդհատ։
2. Որ առ. մեզ արդ. վայելչագրու-թիւն կամ գեղագրութիւն ա-նուանի։
3. Յօր. Է յանգմէ։
4. Յօր. պատկառելի շքեղաց։
5. Մինչեւ ցկնտակս հերձուածոց և հերձասիրաց հակաճառաց ապրդեալ յեկեղեցի. Հարք աւրքը և Յոյնք և Լատինք և Ա-սորիք և Հայք՝ անհերկեալ ողջ-մտութեանն վարէին բաւիղս և բանիւք՝ որով և ասորիս այս հե-տեւող վարուց նոցին և բանից. և այսպէս ՚ի քննութենէ Հօր Թարգ-մանէն զչանաչագոյնսն. և ՚ի խանէն զչօգւոյ Աստուծոյ. ու-մեշտ յարէն և զ՚ի յՕրգւոյ. նա գի չէ եւս եր Ս. փողոտյն վերծ.

ուեալ զայնմանէ ։ Այսպէս է զՔրիստոսի բնութեանց՝ խառնումն առանց նոյնին մնալ՝ որով առնի անբաժանելի միաւորութիւն. և զի մի որ յայլափոխեսցի բնաւորելն զբանին՝ յաւելուն առնմին զբաւաղ [illegible], [illegible], [illegible], և այլն, ՚ի նշանակ անբաժանութեան և անշփոթութեան երկուցն ևս բնութեանց ՚ի Քրիստոս ։

6 . Արդարև բառ հայ ամսոց յաւելու հինգ տառերք քան զին ամենայն ժամանակս բնակութեան Քրիստոսի յարգանդի Ակուսին. զի երկանորեայք են ամսոյ Հայոց ամենայն. իսկ ըս [illegible] բառն՝ ոչ թող պատճառս ։

7 . Որպիսիք են ՚Նէ աստղականք ։

8 . Յոր . պատկանէր [illegible] դոր ։

9 . Յոր . պատկանէր [illegible] ; ։

10 . Զի այսպէս անուանէին զամենայն Հայաստանեայն Կոստանդնուպոլսոյ ։

11 . Լիզեան՝ Թուի բառ յունական

Հայինն՝ Լուծիչ, այսինքն մեկնիչ և լուծիչ խնդրոց բանից ։

12. Այսինքն է, բառ մասոյ որոց հարցն նախնեաց մեկնէր զնոցին բանս, թէ որպէս մի բանն երկու նշանակութեամբք առ. զանազան կարծեաց հակառակելոյն՝ պատշաճեցաւ 'ի նոցունց. և թէ որպէս միաւորելով ընդդէմ նեստորականաց, որք զանձն և զբնութիւն շփոթեալ՝ յերկուս անձնաւորութիւնս զՔրիստոս զատուցանէին, առաւել Մի բնութիւն՝ իբրու նշանակ միութեան անձին ։

13. Ուր է յայտ ա՛ իցէ Յովհաննէսաց վարդապետս, և ոչ՝ հեղինակ գեղեցիկ պատմութեան, զոյգ է գաղափարողի զեղչելոյ զանունն ։

